*ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՆԿԱՏՄԱՄԲ

Մերձավոր Արևելքում (ՄԱ) Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) քաղաքականության ակտիվացումը վերջին տասնամյակներին պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից գերիշխողը համաշխարհային քաղաքականությունում Պեկինի առանցքային դեր ստանձնելու ձգտումն է: ՄԱ-ը աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող տարածաշրջան է, հետևաբար տարածաշրջանի գործերին ակտիվ մասնակցությունը Պեկինի համար անհրաժեշտ նախապայման է գլոբալ տերության կարգավիճակի հասնելու գործում: Տնտեսական օգնության, ներդրումների և քաղաքական աջակցության ձևով "*soft power*"-ի իրականացումը Պեկինի՝ «Մեծ Մերձավոր Արևելքի» քաղաքականության անկյունաքարն է: ՉԺՀ-ը ձգտում է տարածաշրջանի երկրների հետ հարաբերություններ զարգացնել ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմ դիվանագիտության ձևաչափով: Պեկինն արաբական պետությունների հետ համագործակցում է Չին-արաբական համագործակցության համաժողովի, Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի և չին-աֆրիկյան համագործակցության ֆորումի շրջանակներում: Պեկինը կայուն երկկողմ հարաբերություններ է զարգացնում ոչ միայն տարածաշրջանի ռազմավարական նշանակությամբ երկրների, այլև Չինաստանի համար էներգետիկ հետաքրքրություն չներկայացնող և ռազմավարական առումով կարևորություն չներկայացնող երկրների հետ: Պեկինը ձգտում է ՄԱ-ում հնարավորինս ընդլայնելու իր տնտեսական ներկայությունը տարածաշրջանի երկրների հետ առևտրային կապերի զարգացման միջոցով: Չինաստանը շահագրգռված է ոչ միայն ՄԱ-ի երկրների տնտեսություններում հնարավորինս մեծ չափով

ներդրումներ իրականացնելու մեջ, ընդ որում՝ առանց քաղաքական նախապայմանների, այլև խրախուսում է սեփական տնտեսության մեջ մերձավորարևելյան, հատկապես արաբական երկրների կողմից իրականացվող կապիտալ ներդրումները:

Տարածաշրջանում ՉԺՀ-ի գլխավոր մրցակիցն ԱՄՆ-ն է, ինչն ինքնին պայմանավորում է Պեկինի մերձավորարևելյան քաղաքականության բովանդակությունն ու բնույթը: Խնդիրն այն է, որ Չինաստանն իր արագ աճող տնտեսության համար պահանջվող նավթային պահանջարկի 50 %-ն ապահովում է ՄԱ-ից ներկրվող նավթի հաշվին, որն առաջիկա տարիներին կարող է հասնել 70 %-ի: Հետևաբար ՄԱ-ի երկրների էներգետիկ սեկտորում չինական նավթային ընկերությունների համար ամուր դիրքերի ապահովումը Չինաստանի մերձավորարևելյան քաղաքականության գերակա ուղղությունն է: Սակայն ԱՄՆ-ն, ինչպես նաև Արևմուտքի երկրները ՉԺՀ-ի էներգետիկ «մեծ պահանջարկը» սպառնալիք են դիտում համաշխարհային էներգետիկ շուկայի կայունությանն ու գլոբալ նավթագազային աշխարհաքաղաքական հավասարակշռությանը, այսինքն՝ մեծ քանակությամբ էներգիա սպառող երկրների կենսական շահերին: Իսկ Չինաստանի տնտեսության դինամիկ աճը նավթի գների բարձրացման, էներգետիկ պաշարների համար մղվող պայքարի սրման, շրջակա միջավայրի աղտոտման և գլոբալ տաքացման պատճառ է համարվում:

Այնուհանդերձ, Պեկինն աստիճանաբար ընդլայնում է ՄԱ-ում իր քաղաքական և տնտեսական ներկայությունը՝ տարածաշրջանային գործընթացների վրա առավել մեծ ազդեցություն ձեռք բերելով:

Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում 2011 թ. սկզբից ի վեր Հյուսիսային Աֆրիկայում (ՀԱ) և ՄԱ-ում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք բնավ չէին կարող անտարբեր և անմասն թողնել Պեկինին: Նշենք, որ չին փորձագետներն իրենց նախնական գնահատականներում անկարգությունների պատճառները հիմնականում պայմանավորում էին այդ երկրների քաղաքական համակարգերի ու սոցիալական հակասություններով, տնտեսության ոլորտում առկա խնդիրներով, բնակչության շրջանում զբաղվածության անմխիթար վիճակով, մշակութային ու կրոնական հիմնախնդիրներով, արտաքին միջամտությամբ և մի շարք այլ գործոններով: Վերջիններիս համաձայն՝ նոր պայթյունը երկար ժամանակ կուտակված հին խնդիրների հետ մեկտեղ ջրի

երես հանեց տարածաշրջանում զարգացման մոդելի ձևափոխության միտումներն ու անխուսափելիությունը[1]:

Գործնականում Չինաստանը բախվեց արագ փոփոխվող զարգացումների հետ և ստիպված էր հարմարեցնել իր արտաքին քաղաքականությունն ընթացիկ իրավիճակների հետ: Չինական ԶԼՄ–ները կարճաժամկետ շփոթությունից հետո դրանք անվանեցին «արաբական սոցիալական և քաղաքական հուզումներ»: Իսկ ավելի ուշ, չինական ԶԼՄ–ներում շրջանառության մեջ դրվեցին «արաբական գարուն» և «արաբական հեղափոխություն» եզրույթները:

Սակայն Պեկինին մտահոգում էին ոչ միայն այդ երկրների հետ իր հարաբերությունների հեռանկարի հետ կապված խնդիրները, որոնց մի մասի հետ ՉԺՀ–ի հարաբերությունները հասնում են ռազմավարական մակարդակի, այլև մերձավորարևելյան զարգացումների վարակիչ անդրադարձը սեփական երկրում: Այդ իսկ պատճառով Պեկինն անմիջապես միջոցներ ձեռնարկեց Չինաստանի ներսում հնարավոր հետևանքների կանխարգելման և ներքին կայունության ապահովման, ինչպես նաև տարածաշրջանում իր աճող տնտեսական և քաղաքական շահերի պաշտպանության ուղղությամբ: Դրանք միտված էին արաբական աշխարհում տեղի ունեցող անկանխատեսելի և անսպասելի իրադարձությունների արդյունքում ՉԺՀ–ի տնտեսական կորուստների նվազեցմանը[2]:

ՉԺՀ–ի կառավարությանն անշուշտ չէր կարող չմտահոգել Չինաստանի բնակչության շրջանում սոցիալական լարվածության հնարավոր աճը՝ կապված բնակարանային հարկերի և սննդամթերքի գների բարձրացման հետ: ՉԺՀ–ի նախագահ Հու Ձինթաոն 2011 թ. փետրվարի 19–ին նահանգային և նախարարական մակարդակի պաշտոնատար անձանց հետ հանդիպման ընթացքում հայտնեց, որ անհրաժեշտ է լուծել «առկա խնդիրները, որոնք կարող են վտանգել հասարակության ներդաշնակությունն ու կայունությունը»: Նախագահը հայտարարեց, որ պետք է ժողովրդին առավել որակյալ սոցիալական ծառայություններ մատուցել և բարելավել համացանցի տեղեկատվության կառավարումը՝ «հասարակական կարծիքն ուղղորդելու նպատակով»: Խնդիրն այն է, որ համացանցի միջոցով երկրի բնակիչներին կոչ էր արվում հանդես գալու «Հասմիկի հեղափոխության» անվան

[1] Влияние беспорядков в ближневосточном регионе на Китай, Russian.people.com.cn, 04.03.2011. http://russian.people.com.cn/31520/7308133.html

[2] Jing–Dong Yuan, Arab Spring, Global Repercussions, World Politics Review (WPR), 20.12.2011, p. 8.

տակ՝ իշխանություններին ներկայացնելով «սննդի, բնակապահովման, աշխատանքի, արդարության, ազատության, ժողովրդավարության, քաղաքական բարեփոխումների, բազմակուսակցական կառավարման և այլ» պահանջներ: Փետրվարի 20-ին չինական իրավապահ մարմինները ստիպված եղան ցրել ՉԺՀ-ի մեկ տասնյակից ավելի քաղաքներում, այդ թվում Պեկինում ու Շանհայում կազմակերպվող չլիազորված ցույցերը, որոնց ընթացքում ձերբակալվեց հարյուրից ավելի ակտիվիստ: Երկրի նախագահը հրահանգավորեց խստացնել համացանցի նկատմամբ վերահսկողությունը: Իշխանությունները սահմանափակեցին զանգվածային բողոքներով համակված երկրներից ստացվող փողոցային ելույթների վերաբերյալ տեղեկատվական հոսքը: Անկասկած, վերոնշյալ երկրների և Չինաստանի ցուցարարների հնչեցրած դժգոհությունների միջև բազմաթիվ ընդհանրություններ կային, սակայն Պեկինին հաջողվեց խիստ վերահսկողություն սահմանել ԶԼՄ-ների, համացանցի և այլ ֆորումների նկատմամբ, ինչը բարդություններ ստեղծեց զանգվածային ցույցերի կազմակերպման համար:

Ակնհայտորեն հորդորելով զանգվածներին չենթարկվել կապիտալիստական Արևմուտքի սադրանքներին՝ չինական հայտնի վերլուծական կենտրոնները հանդես եկան «Արևմտյան դավադրության վերաբերյալ նախազգուշացումներով՝ վերջիններիս նպատակ հայտարարելով զարգացող Չինաստանի թուլացումը՝ սկսած ռազմական զսպումից մինչև «ժողովրդավարական իդեալների տարածումը»»: Վերջիններիս կարծիքով Պեկինին վարկաբեկելու ու սանձելու նպատակով Վաշինգտոնը գործի է դրել իր ռազմավարական լծակները՝ «արժեքային համակարգն ու փափուկ ուժը»:

Անշուշտ, ՀԱ-ում ու ՄԱ-ում բողոքի ցույցերն ու հեղափոխությունները լուրջ փորձություն դարձան նաև Չինաստանի արտաքին քաղաքականության համար, որի գլխավոր սկզբունքն է չմիջամտության հայեցակարգը[3]: Հատկապես «չմիջամտության քաղաքականությունն» է Պեկինը ընդգծում որպես իր արտաքին քաղաքականության անկյունաքար (և ոչ միայն ՄԱ-ում)՝ այն համարելով իբրև գլխավոր երաշխիք տարածաշրջանային և գլոբալ կայունության պահպանման գործում՝ միաժամանակ զուգահեռներ տանելով «Չինաստանի ներքին գործերին չմիջամտության»

[3] African Revolutions Challenge Chinese Diplomacy, Intelligence Quarterly, 11.04.2011. http://www.intelligencequarterly.com/2011/04/north-african-revolutions-challenge-chinese-diplomacy/

հետ այնպիսի ցավոտ հարցերում, ինչպիսիք Թայվանի ու Տիբեթի խնդիրներն են[4]: Պեկինը պնդում է, որ պետք է հետամուտ լինել այլ պետությունների ներքին գործերին չմիջամտության սկզբունքին՝ միաժամանակ ընդգծելով Չինաստանի շահերի պաշտպանության անհրաժեշտությունը[5]: Այդ պատճառով սկզբնական շրջանում Չինաստանը ձգտում էր հնարավորին չափ հեռու մնալ հակամարտությունների նկատմամբ որևէ գնահատականներից՝ սահմանափակվելով միայն հակամարտող կողմերին հաշտություն կնքելու և խաղաղությունը վերականգնելու կոչերով:

### *Թունիս*

Թունիսյան իրադարձությունների սկզբում Պեկինում փորձում էին խնդրին առանձնահատուկ ուշադրություն չդարձնել մասամբ երկրի զարգացումների վերաբերյալ հստակ պատկերացումների բացակայության պատճառով[6]: Թունիսի հեղափոխությունը Չինաստանին դրել էր բարդ իրավիճակի առջև, այդ իսկ պատճառով հուզումների սկզբնական փուլում, ի տարբերություն Արևմուտքի, Չինաստանը հիմնականում ձեռնպահ էր մնում որևէ մեկնաբանությունից և գնահատականներից[7]: Բեն Ալիի՝ Թունիսից հեռանալուց հետո Չինաստանի ԱԳՆ-ի խոսնակ Հոն Լեյը հայտնեց, որ «Թունիսը Չինաստանի բարեկամն է: Չինաստանը մտահոգված է թունիսյան իրադարձություններով և հույս է հայտնում, որ երկրում կայունությունը հնարավորինս կարճ ժամկետում կվերականգնվի»[8]: Մարտի 7-ին Չինաստանի փոխարտգործնախարար Ճայ Ծունը (Zhai Jun) Թունիս ժամանեց՝ նոր կառավարության հետ կապերի հաստատման և համագործակցության ամրապնդման նպատակով[9]: Չին դիվանագետը հայտնեց, որ Չինաստանը հարգում է թունիսցի ժողովրդի ընտրությունը և

---

[4] Пахомова М., КНР: к вопросу о «политике невмешательства во внутренние дела», Политборд, 9.10.2012. http://www.inomnenie.ru/debate/11903/

[5] Unease from Afar, The Brookings Institution, 18.11.2011. http://www.brookings.edu/research/articles/2011/11/18-arab-awakening-china-pollack

[6] Jonas Parello-Plesner, China and the Arab Spring: External and Internal Consequences and Implications for EU-China Cooperation, ISPI, No. 53, MAY 2011, p. 2.

[7] African Revolutions Challenge Chinese Diplomacy, նշվ. աշխ., էջ 1:

[8] China Hopes Stability in Tunisia Restored: FM, China Daily, 15.01.2011. http://www.chinadaily.com.cn/imqq/china/2011-01/15/content_11868329.htm; BBC, 15.01.2011.

[9] China Respects Choice of Tunisian People, China Daily, 08.03.2011. http://www.chinadaily.com.cn/china/2011-03/08/content_12134764.htm

ցանկանում է խորացնել ավանդական բարեկամական հարաբերությունները Թունիսի հետ: Նա նաև հայտարարեց Թունիսի հետագա զարգացման նպատակով 6 մլն ԱՄՆ դոլարի անվարձահատույց օգնություն տրամադրելու վերաբերյալ ՉԺՀ-ի կառավարության մտադրությունը[10]:

Փաստորեն, արագ արձագանքելով երկրում նոր վարչախմբի փոփոխությանը՝ ՉԺՀ-ը հաջող անցում կատարեց Թունիսի նոր կառավարության ճանաչման հարցում[11]: 2012 թ. հունիսի սկզբին Թունիսի վարչապետ Համադի Ջիբայլին (Hamadi Jebali) չինացի իր գործընկերոջ հետ հանդիպման ընթացքում նշեց, որ Թունիսը միջազգային նոր իրավիճակում շատ ավելի է կարևորում Պեկինի դերն ու երկու երկրների միջև ռազմավարական, փոխշահավետ և «խիստ փոխլրացնող» համագործակցությունը՝ միաժամանակ խոստանալով Թունիսում չինական ընկերությունների ներդրումների համար բարենպաստ միջավայր ստեղծել[12]:

### *Եգիպտոս**

Նախքան Եգիպտոսում հեղաշրջման իրականացումը՝ 2011 թ. հունվարի 25-ից փետրվարի 11-ն ընկած ժամանակահատվածում, չինական մամուլը քննադատության ենթարկեց Եգիպտոսի հակակառավարական ելույթները՝ դրանք որակելով իբրև «ավազակային փողոցային ժողովրդավարություն»[13]: Միաժամանակ բարձր գնահատելով Եգիպտոսի հետ ավանդական բարեկամությունն ու ռազմավարական համագործակցությունը՝ պաշտոնական Պեկինը հանդես եկավ «սոցիալական անվտանգության

[10] African Revolutions Challenge Chinese Diplomacy, նշվ. աշխ., էջ 1, Xinhua News Agency, 7.03.2011; Tunisia Online, 8.03.2011.

[11] African Revolutions Challenge Chinese Diplomacy, նշվ. աշխ., էջ 1:

[12] China, Tunisia Confident in Prospect of Bilateral Ties, GOV.cn, 2.06.2012. http://www.gov.cn/misc/2012-06/02/content_2151509.htm

* Չին-եգիպտական համագործակցության մասին մանրամասն տես Арутюнян А., О китайско-египетских отношениях, “Модернизация и Традиции”, XXVI международная конференция. Источниковедение и историография стран Азии и Африки, Санкт-Петербург, 2011 г., стр. 9-10, Հարությունյան Ա., Չին-եգիպտական ռազմաքաղաքական համագործակցության շուրջ, Մերձավոր Արևելք, Պատմություն, Քաղաքականություն, Մշակույթ, հ. VII, Երևան, 2011 թ., էջ 149-158, Հարությունյան Ա., Չին-եգիպտական առևտրատնտեսական համագործակցության շուրջ, Արևելագիտական ուսումնասիրություններ, հ. II, Երևան, 2011 թ., էջ 87-104:

[13] Christopher Bodeen, China, Wary of Arab Spring, Hosts Egypt’s Morsi, The Jakarta Post, 29.08.2012. http://www.thejakartapost.com/news/2012/08/29/china-wary-arab-spring-hosts-egypts-morsi.html

ապահովման և երկրի բնականոն հունի վերականգնման ուղղությամբ Եգիպտոսի իշխանությունների գործադրած ջանքերի» պաշտպանությամբ[14]: Չինաստանը վստահություն էր հայտնում Կաիրի իմաստնության ու առկա դժվարությունները հաղթահարելու և իրադրությունը սեփական ուժերով, առանց արտաքին միջամտության կարգավորելու կարողության հանդեպ: Պեկինը նաև ակնկալում էր, որ չին-եգիպտական հարաբերությունները չեն տուժի անկարգությունների հետևանքով[15]:

ՉԺՀ-ի կառավարությունն անմիջապես Եգիպտոսից հարյուրավոր չինացիների, թայվանցիների (300), այդ թվում՝ եգիպտական տարբեր քաղաքներում գտնվող հոնկոնգցի զբոսաշրջիկների արագ ու արդյունավետ տարհանման նպատակով չարտերային չվերթներ իրականացրեց[16]: Նշենք, որ Եգիպտոսում բնակվող չինացի քաղաքացիների թիվը հասնում էր 1800-ի[17]:

Չինացիների տարհանման գործը որոշակիորեն նպաստեց չինական մամուլում «ժողովրդավարության և սոցիալական վերափոխումների» վերաբերյալ զգայուն խնդիրների լուսաբանումից հասարակության ուշադրության շեղմանը[18]: Եգիպտական «Լոտոսի հեղափոխության» վերաբերյալ տեղեկատվության լուսաբանման նկատմամբ վերահսկողության հաստատմանը զուգահեռ չինական իշխանությունները քննարկում էին զարգացող երկրների համար «արևմտյան ժողովրդավարական մոդելի» անհամատեղելիության խնդիրը[19]: Չինական մամուլը գրում էր, որ ամերիկյան և եվրոպական կառույցներն ու նորմերը չեն կարող համապատասխանել աֆրիկյան և մերձավորարևելյան իրականությանը, մանավանդ որ «գունավոր հեղափոխությունները» երբևէ իրական ժողովրդավարության չեն հանգեցրել: Փորձագիտական շրջանակները, ընդգծելով Եգիպտոսի և ԱՄՆ-ի միջև դաշնակցային հարաբերությունների փաստը, գտնում էին, որ

[14] Willy Lam, Beijing Wary of “Color Revolutions” Sweeping Middle East/North Africa, The Jamestown Foundation, Vol. XI, Issue 3, 10.02.2011, p. 3. http://www.jamestown.org/uploads/media/cb_11_3_04.pdf; FMPRC.gov.cn, 30.01.2011.

[15] Xinhua News Agency,10.02.2011.

[16] Willy Lam, Special Commentary: Beijing’s Response to Egypt’s Lotus Revolution, Vol.: 0 Issue: 0, 10.02.2011, p. 1. http://www.jamestown.org/single/?no_cache=1&tx_ttnews[tt_news]=37444&tx_ttnews[backPid]=61&cHash=b9a8931f2e

[17] Parello-Plesner, China and the Arab Spring: External and Internal Consequences and Implications for EU-China Cooperation, ISPI, No. 53, MAY 2011, p. 2. http://magazine.caing.com/2011-02-12/100224840.html

[18] Jonas Parello-Plesner, China and the Arab Spring, նշվ. աշխ., էջ 2:

[19] Willy Lam, Beijing Wary of “Color Revolutions” Sweeping Middle East/North Africa, նշվ. աշխ., էջ 2:

եգիպտական հեղափոխությունը կարող է անգամ վտանգել ՄԱ-ում ԱՄՆ-ի շահերը: Չին փորձագետների կարծիքով Եգիպտոսում և հարևան երկրներում ռեալ ընտրությունների դեպքում հնարավոր էր համարվում իշխանության իսլամիստ առաջնորդների գալու փաստը, որոնք ոչ միայն «արհամարհում են ամերիկյան ժողովրդավարությունը, այլև սպառնում են ԱՄՆ-ի նավթային առաքումներին»: Դրա վառ ապացույցն էր Իրանական Իսլամական հեղափոխությունը, որից հետո մուսուլմանական երկրներում գրեթե բոլոր ժողովրդավարական առաջադեմ ընտրությունների արդյունքում իշխանության են եկել Արևմուտքին և Իսրայելին թշնամաբար տրամադրված իսլամական վարչակարգերը:

Դեռ 2009 թ. Չինաստանը քննադատում էր ԱՄՆ-ին Իրանում հակակառավարական ցույցերին աջակցություն ցուցաբերելու համար: Պաշտոնական «*China Daily*»-ն գրում էր, որ ՄԱ-ում և աշխարհում առհասարակ խաղաղության և կայունության պահպանման ցանկության դեպքում Իրանում, այսպես կոչված, «գունավոր հեղափոխությամբ» քաոսի առաջացումը խիստ վտանգավոր է, և որ երկրի ապակայունացումը չի բխում որևէ կողմի շահերից:[20]

Մյուս կողմից՝ չին փորձագետները կարծում էին, որ իսլամիստական ցենտրիզմը, պայքարելով Արևմուտքի կողմից «իսլամական սպառնալիքի» տեսության և ներքին ծայրահեղականության ու պահաբեկչության դեմ, կարող է իսլամի վերաբերյալ պատկերացումների վերանայման գործում դրական դեր խաղալ: Իսլամիստական կենտրոնամետ ուժերի ընդլայնումը, վերջիններիս վարած չափավոր և կուսակցական-քաղաքական ուղեգիծը որոշ իմաստով ցույց են տալիս, որ այս ուժերի գլխավոր խնդիրը ծայրահեղականությունից և կոշտ արմատականությունից հրաժարումն ու իրենց ազգային առանձնահատկություններին ու պայմաններին համապատասխան զարգացման նոր գաղափարների և ուղիների որոնումն ու իրագործումն է[21]:

[20] Նույն տեղում, էջ 3, Asia Times, 20.06.2009.

[21] Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, Journal of Middle Eastern and Islamic Studies (In Asia), Shanghai International Studies University, Vol.: 6, No. 3, 2012, p. 5-6. http://mideast.shisu.edu.cn/picture/article/33/5e/9c/9fc0f54c4453bbeca59f4f718aa2/3c548194-582d-4ce6-8b55-268a5eaebea8.pdf

Իսլամիստական ցենտրիզմի գաղափարական հենասյունն է հակածայրահեղականությունը և հակահեգեմոնիզմը, որի համաձայն՝ իսլամական աշխարհում արդարության ու ներդաշնակության, սոցիալական փոփոխությունների ու ժողովրդավարության կարելի է հասնել աստիճանաբար և երկխոսության միջոցով:

Բոլոր դեպքերում, Պեկինը չսահմանափակվեց սոսկ հռետորությամբ, այլ արագ անցում կատարեց գործնական դիվանագիտության: 2011 թ. մարտի 5–13-ին ՉԺՀ-ի փոխարտգործնախարար Չժան Ցզյունն աշխատանքային այցեր ունեցավ Ալժիր, Եգիպտոս, Թունիս և Սաուդյան Արաբիա: Չին դիվանագետը կարևոր քայլ գնահատեց Եգիպտոսում նոր կառավարության ձևավորումը, սոցիալական կայունությունը և երկրի տնտեսության զարգացմանն ուղղված իշխանության ջանքերը՝ միաժամանակ ՉԺՀ-ի օգնությունն առաջարկելով առաջիկա դժվարությունների հաղթահարման գործում[22]:

Հարկ է նշել, որ Եգիպտոսում պետական հեղաշրջումից հետո՝ 2011 թ. ընթացքում, երկու երկրների պաշտոնատար անձինք առավել հանգամանալից ելույթներով հանդես չեն եկել[23]:

2012 թ. մայիսի 2–3-ը ՉԺՀ-ի արտգործնախարար Յան Ցզեչին արդյունավետ այց ունեցավ Եգիպտոս, որի ընթացքում ընդգծեց վերջին զարգացումների ընթացքում Չինաստանի դրսևորած չմիջամտության քաղաքականությունը[24]: ՉԺՀ-ի նախարարը հանդիպումներ ունեցավ ԱՊԼ-ի գլխավոր քարտուղար Ամր Մուսայի և իր գործընկեր Նաբիլ ալ-Արաբիի, վարչապետ Իսամ Շարիֆի հետ: Չին նախարարն ընդգծեց, որ չին-եգիպտական հարաբերություններն ունեն ամուր հիմքեր և «հարավ-հարավ» համագործակցության լավագույն օրինակ են ծառայում: Նոր իրավիճակում կողմերը շարունակում են ամրապնդել քաղաքական և ռազմավարական համագործակցությունը: Չինաստանը հարգում է եգիպտացի ժողովրդի ընտրությունն ու բարձր է գնահատում Եգիպտոսի ակտիվ և կառուցողական դերը տարածաշրջանային կայունության ու զարգացման գործում[25]: Իսկ 2012 թ. հուլիսի 19-ին՝ Պեկինում Չին-աֆրիկական ֆորումի շրջանակներում հանդիպման ընթացքում, ՉԺՀ-ի նախագահը հայտարարեց, որ Չինաստանն աֆրիկյան երկրներին 20 մլրդ ԱՄՆ դոլարի վարկեր կտրամադրի՝ հավելելով, որ այդ թվերը կրկնակի գերազանցում են

[22] Очередная пресс-конференция 10 марта 2011 г. у официального представителя МИД КНР Цзян Юй, Посольство Китайской Народной Республики в Республике Армения, 10.03.2011. http://am.chineseembassy.org/rus/ztlm/fyrth/t806056.htm

[23] Подкопаева М., Египет между США и Китаем, 29.01.13. http://zavalinka.org/read.php?id=610285

[24] Мария Пахомова, КНР: к вопросу о «политике невмешательства во внутренние дела», նշվ. աշխ., էջ 1:

[25] Очередная пресс-конференция 3 мая 2011 г. у официального представителя МИД КНР Цзян Юя, Посольство Китайской Народной Республики в Республике Казахстан, 03.05.2011. http://kz.chineseembassy.org/rus/fyrth/t820278.htm

2009 թ. նոյեմբերին Շարմ ալ-Շեյխում տեղի ունեցած ֆորումի ընթացքում նախատեսվող գումարին[26]:

Հունիսի 24-ին Պեկինը շնորհավորեց Մուհամմեդ Մուրսիին՝ Եգիպտոսի նախագահի պաշտոնում ընտրվելու առիթով, իսկ եգիպտացի ժողովրդին ՉԺՀ-ի հարգանքն արտահայտեց՝ ինքնուրույն ընտրություն կատարելու կապակցությամբ[27]:

Եգիպտոսի հակակառավարական ելույթներից և հեղաշրջումից հետո երկու երկրների միջև ջերմ հարաբերությունները վերահաստատելու հնարավորություն էր 2012 թ. օգոստոսի 28-30-ին Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսիի՝ ՉԺՀ կատարած այցը: ՉԺՀ-ի նախագահ Հու Ձինթաոն արտահայտեց «նոր ժամանակներում եգիպտաչինական հարաբերություններում նոր էջ բացելու» ՉԺՀ-ի պատրաստակամությունը[28]: Նախագահի այցի նախօրեին ՉԺՀ-ում Եգիպտոսի դեսպան Աhմեդ Ռեզքը «Սինխուա» գործակալությանը տված հարցազրույցում նշել էր, որ Եգիպտոսի նոր նախագահի այցը Չինաստան, անկասկած, պետք է ծառայեր երկկողմանի հարաբերությունների զարգացմանը հնարավոր բոլոր ուղղություններով[29]: Նշենք, որ ՉԺՀ-ի այցից հետո Եգիպտոսի նախագահը պատրաստվում էր այցելել ԱՄՆ՝ Նյու Յորք և Վաշինգտոն՝ Նյու Յորքում մասնակցելու ՄԱԿ-ի ԳԱ-ի նստաշրջանին, իսկ Վաշինգտոնում բանակցություններ վարելու ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ[30]:

Հարկ է նկատել, որ սա նախագահական պաշտոնը ստանձնելուց հետո Մուրսիի առաջին պետական այցն էր ՄԱ-ի և Աֆրիկայի շրջանակներից դուրս, որով ընդգծվում էր Եգիպտոսի համար Չինաստանի կարևորությունն իբրև ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական

[26] Չինական կառավարության տվյալներով աֆրիկական պետությունների հետ ՉԺՀ-ի առևտրային շրջանառությունը 2011 թ. հասել է ռեկորդային ցուցանիշի՝ 166,3 մլրդ դոլար՝ 2009 թ. աճելով 83 %-ով:

[27] Очередная пресс-конференция 25 июня 2012 г. у официального представителя МИД КНР Хун Лэя, МИД КНР, 25.06.2012. http://www.fmprc.gov.cn/rus/xwfw/fyrth/lxjzhzhdh/t945889.shtml

[28] Китай предложил Египту программу развития отношений между странами, РИА Новости, 28.08.2012.
http://ria.ru/world/20120828/732406506-print.html?ria=o22j2vaa411rvpne6b5humapudfh5d1g

[29] Предстоящий визит президента Египта поможет вывести китайско-египетские отношения на новую ступень-посол Египта в КНР, Жэньминь Жибао, 24.08.2012. http://russian.people.com.cn/31521/7922267.html000

[30] Президент Египта М. Мурси 23 сентября совершит визит в США, Жэньминь Жибао, 23.08.2012. http://russian.people.com.cn/31520/7920893.html

անդամի, իբրև ռազմավարական գործընկերոջ, ինչպես նաև առևտրային ու ներդրումային կենսական աղբյուրի: Այցը դիտվում էր նաև իբրև ԱՄՆ-ի ուղղությամբ խիստ սևեռումից Եգիպտոսի արտաքին քաղաքականության վերակողմնորոշում դեպի ՉԺՀ[31]: Մուրսին բազմիցս հայտնել էր Եգիպտոս-ԱՄՆ հարաբերությունների վերանայման իր մտադրության մասին՝ Եգիպտոսի ազգային շահերի և եգիպտական հասարակության պահանջների առավել խոր արտացոլման նպատակով: Սա ենթադրում էր միջազգային ասպարեզում Եգիպտոսի դիրքերը բարձրացնելու նպատակով անցյալում անտեսված Չինաստանի և մի շարք այլ երկրների ու տարածաշրջանների հետ ռազմավարական մակարդակի ավելի սերտ փոխհարաբերությունների զարգացում[32]: Ըստ չինական պաշտոնական մամուլի՝ եգիպտական կողմը ցանկանում էր վերանայել Արևմուտքից չափազանց կախման մեջ գտնվող իր արտաքին քաղաքականությունը և արևելյան ու արևմտյան պետությունների հետ հարաբերություններում հավասարակշռված մոտեցում որդեգրել: Չինաստանը որակելով իբրև աշխարհում հավասարակշռություն ապահովող կարևոր երկիր՝ Մ. Մուրսին գտնում էր, որ այն չափազանց կարևոր դեր է խաղում ողջ միջազգային հանրության ուշադրության կիզակետում գտնվող սիրիական ճգնաժամի և այլ խնդիրների կարգավորման գործում[33]: Չինաստանն անվանելով «լավ եղբայր, բարեկամ և գործընկեր»՝ Մուրսին նշեց, որ Եգիպտոսը «գնահատում և հարգում է ՉԺՀ-ի արդար դիրքորոշումը տարածաշրջանային և միջազգային լուրջ խնդիրների նկատմամբ և պատրաստ է տարբեր մարտահրավերների դիմակայման նպատակով ամրապնդելու կապերն ու համակենտրոնացնելու ջանքերը չինական կողմի հետ»[34]: ՉԺՀ-ի փոխնախագահ Սի Ծինպինը նշեց, որ Եգիպտոսը և Չինաստանը պետք է կենտրոնացնեն իրենց ջանքերը տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ՝ հավելելով, որ «[Չինաստանը] Եգիպտոսին միշտ համարել է առանցքային,

[31] Christopher Bodeen, նշվ. աշխ., էջ 1:

[32] Chris Zambelis, A New Egypt Looks to China for Balance and Leverage, China Brief, The Jamestown Foundation,Vol. XII, Issue 18, 21.08.2012, p. 9. http://www.jamestown.org/uploads/media/cb_09_09.pdf

[33] Комментарий: Визит М. Мурси в КНР откроет новую страницу в китайско-египетских отношениях, Жэньминь Жибао, 29.08.2012. http://russian.people.com.cn/31520/7927350.html

[34] Китай предложил Египту программу развития отношений между странами, РИА Новости, 28.08.2012. http://ria.ru/world/20120828/732406506-print.html?ria=o22j2vaa411rvpne6b5humapudfh5d1g

հավաստի գործընկեր»[35]: Մուհամմեդ Մուրսիի հետ Համաժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի մշտական կոմիտեի նախագահի Ու Բանգոյի հանդիպման ընթացքում վերջինս դրական գնահատեց Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումն արտաքին քաղաքականության առաջնահերթություն դարձնելու ուղղությամբ Եգիպտոսի նոր ղեկավարության որդեգրած ուղեգիծը: «China Daily» կառավարական թերթն անգամ գրեց, որ «Մ. Մուրսիի չինական այցը կարող է փոխել ՄԱ-ի քաղաքական լանդշաֆտը»[36]:

Երկու երկրները դեմ արտահայտվեցին Սիրիայի նկատմամբ ռազմական միջամտությանը[37]՝ չնայած Եգիպտոսի կողմից սիրիական իշխանություններին խիստ քննադատության ու նախագահական պաշտոնից Բաշար ալ-Ասադի հրաժարման օգտին հանդես գալու փաստին[38]: Եգիպտոսը և Չինաստանը հաստատեցին իրենց փոխադարձ աջակցությունն անկախ Պաղեստինյան պետությանը՝ վերջինիս կոչ անելով համագործակցելու ՄԱԿ-ի և միջազգային այլ մարմինների հետ[39]:

Մուրսին նշեց նաև, որ Եգիպտոսը հարգանքով է վերաբերվում չին ժողովրդի ընտրած քաղաքական համակարգին[40] և պատրաստ է «դասեր քաղելու չինական զարգացման մոդելի փորձից»[41]: Նշելով զարգացող երկրից գլոբալ տերության կարգավիճակի՝ Չինաստանի հաջող անցում կատարելու փաստը՝ Եգիպտոսի նախագահը հավելեց, որ 1980-ականներին ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ դառնալու և ՉԺՀ-ի միջազգային դիրքերի ամրապնդման փորձը ոչ միայն բարձր գնահատականի է արժանի, այլև ուսանելի է Եգիպտոսի համար[42]:

Ըստ եգիպտական ԶԼՄ-ների՝ Մուրսիի այցի հիմնական նպատակն էր Եգիպտոսում չինական ներդրումների[43] ավելացումն ու

---

[35] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10, Xinhua, 29.08.2012:

[36] Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

[37] Christopher Bodeen, նշվ. աշխ., էջ 1:

[38] Egyptian President Hails «Syrian revolution» in Tehran Non-Aligned Summit, Al-Arabiya News, 30.08.2012. http://english.alarabiya.net/articles/2012/08/30/235082.html

[39] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10, Xinhua, 30.08.2012:

[40] Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

[41] Китай и Египет обсудили программу расширения партнерских отношений, Телеграф, 28.08.2012. http://telegraf.com.ua/mir/aziya/kitay-i-egipet-obsudili-programmu-rasshireniya-partnerskih-otnosheniy.html

[42] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 9, Freedom and Justice Party, 30.08.2012:

[43] Չինաստանը ներկայումս Եգիպտոսի 25-րդ արտաքին ներդրման աղբյուրն է: Այս մասին տես Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 11:

ներգրավումը: Իբրև համաշխարհային տնտեսության երկրորդ սուբյեկտ՝ Չինաստանը կարող է Մուրսիի կառավարությանն օգնել կենսագործելու երկրի «վերածննդի ծրագիրը»[44]: Կողմերը գյուղատնտեսության, հեռահաղորդակցության, շրջակա միջավայրի, զբոսաշրջության և այլ ոլորտների վերաբերյալ 8 պայմանագիր ստորագրեցին[45]: Ընդհանուր առմամբ ստորագրվեց 4,9 մլրդ ԱՄՆ դոլարի չինական վարկերի և ներդրումների, այդ թվում՝ Վերին Եգիպտոսում էլեկտրակայանի և «Կահիրե-Ալեքսանդրիա» արագընթաց մայրուղու կառուցման վերաբերյալ մի շարք պայմանագրեր[46]: Պեկինն իր պատրաստակամությունը հայտնեց նաև Եգիպտոսի համացանցային ենթակառուցվածքների ընդլայնման նպատակով ներդրումներ կատարելու ուղղությամբ[47]: Նշենք, որ Մ.Մուրսին ՉԺՀ էր ժամանել Եգիպտոսի առաջատար գործարարների 80 հոգանոց պատվիրակության ուղեկցությամբ, որոնք մտադիր էին ներդրումային նախագծեր քննարկել չինական 200 ընկերության հետ: ՉԺՀ-ի նախագահը եգիպտական կողմին աջակցություն խոստացավ նաև Սուեզի ջրանցքի գոտու զարգացման գործում[48], ինչպես նաև առաջարկեց ամրապնդել չին-եգիպտական փոխազդեցությունը չին-արաբական և չին-աֆրիկյան բազմակողմ համագործակցության շրջանակներում[49]:

Չինական ներդրումների գրավման հարցում Եգիպտոսն, անշուշտ, ունի ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական շարժառիթներ: Խնդիրն այն է, որ Եգիպտոսը տարեկան 1,5 մլրդ ԱՄՆ դոլար է ստանում ԱՄՆ-ից, որից 1,3-ը՝ ռազմական նպատակներով[50]: Նախքան Մուրսիի չինական այցը Եգիպտոսը բանակցություններ էր վարում Վաշինգտոնի հետ՝ 1 մլրդ ԱՄՆ դոլարի պարտքի մարման ակնկալիքով, իսկ Արժույթի Միջազգային Հիմնադրամին (IMF) դիմել էր 4,8 մլրդ ԱՄՆ դոլարի ցածր տոկոսադրույքով վարկ ստանալու խնդրանքով[51]: Մինչդեռ չինական կապիտալի ներարկումները եգիպտական տնտեսություն կարող են Եգիպտոսին իր ֆինանսական աղբյուրների տարրորշման

[44] Комментарий: Визит М. Мурси в КНР откроет новую страницу в китайско-египетских отношениях, նշվ. աշխ., էջ 1, Al-Arabiya, Dubai, 27.08.2012:

[45] Christopher Bodeen, China, նշվ. աշխ., էջ 1:

[46] Masry al-Youm, 29.08.2012.

[47] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10; Al-Arabiya, 27.08.2012:

[48] Christopher Bodeen, նշվ. աշխ., էջ 1:

[49] Китай предложил Египту программу развития отношений между странами, նշվ. աշխ., էջ 1:

[50] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10; Al-Akhbar, Beirut, 17.09.2012.

[51] Wall Street Journal, New York,11.09.2012.

հնարավորություն ընձեռել՝ միաժամանակ մեծացնելով Եգիպտոսի բանակցային լծակները ԱՄՆ-ի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ), ինչպես նաև ֆինանսավորման այլ աղբյուրների նկատմամբ[52]: Նշենք, որ Եգիպտոսին տրամադրվելիք չինական օգնությունն ընդհանուր առմամբ գնահատվում էր 2 մլրդ ԱՄՆ դոլար, որի մեջ մտնում էր 450 մլն յուան՝ 70 մլն ԱՄՆ դոլար՝որպես անհատույց օգնություն և Եգիպտոսի Ազգային Բանկին տրամադրվող 200 մլն ԱՄՆ դոլարի արտոնյալ վարկ[53]: Դեռևս 2011 թ. հոկտեմբերի 10-ին չինական իշխանությունները 78 000 ԱՄՆ դոլարի գումար էին հատկացրել «Չին-եգիպտական բարեկամության դպրոցին»[54]:

Հարկ է նկատել, որ Եգիպտոսն իր հերթին, իբրև բազմաթիվ աֆրիկական երկրներում արտադրանք կուտակող-բաշխող կենտրոն, առանցքային տարանցիկ կենտրոն է համարվում չինական ապրանքների՝ Աֆրիկա արտահանման և Չինաստանի ու Աֆրիկայի երկրների միջև առևտրատնտեսական կապերի ու մարդասիրական փոխանակումների խթանման համար[55]: Այս առնչությամբ Մուրսին մատնանշեց Եգիպտոսի իդեալական դիրքն Աֆրիկա և ՄԱ չինական ներդրումների համար դարպաս ծառայելու հարցում՝ միաժամանակ ընդգծելով «Մետաքսի ճանապարհին» վերադառնալու Եգիպտոսի մտադրությունը՝ իբրև Եգիպտոսի և Չինաստանի միջև ուղղակի կապի[56]:

Ուշագրավն այն է, որ Չինաստանից Մ. Մուրսիի վերադառնալուց հետո ԱՄՆ-ի նախագահի Օբամայի հետ Մուրսիի՝ սեպտեմբերին նախատեսվող հանդիպումը չկայացավ: 2012 թ. սեպտեմբերի 11-ին Կաhիրեում ԱՄՆ-ի դեսպանատան մոտ հավաքված ամբոխը, բողոքարկելով ԱՄՆ-ում «Մուսուլմանների անմեղություն» ֆիլմի ցուցադրման դեմ, ԱՄՆ-ի դեսպանատան դրոշը պատռեցին ու հրկիզեցին: Հաջորդ օրն Օբաման եգիպտացիների մասին հայ-

[52] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10:

[53] Лузянин С., Политика Китая на Ближнем Востоке: «накормить волков и сохранить овец», Голос России, 17.12.2012. http://rus.ruvr.ru/2012_12_17/Politika-Kitaja-na-Blizhnem-Vostoke-nakormit-volkov-i-sohranit-ovec/
2 մլրդ ԱՄՆ դոլարի մոտ 30 %-ը Մ. Մուրսին ստացել է, մնացածը Եգիպտոսին խոստացվել է: 2011 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 8,8 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2012 թ.՝ մոտ 9 մլրդ ԱՄՆ դոլար:

[54] Китай подарил египетским школьникам оборудование на 78 тысяч долларов, KM Онлайн, 11.10.2011. http://www.km.ru/v-mire/2011/10/11/obrazovanie-v-mire/kitai-podaril-egipetskim-shkolnikam-oborudovanie-na-78-tysyach-

[55] Комментарий: Визит М. Мурси в КНР откроет новую страницу в китайско-египетских отношениях, նշվ. աշխ., էջ 1:

[56] Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10, Freedom and Justice Party, 30.08.2012.

տարարում է. «...չեմ կարծում, որ մենք կարող ենք նրանց դաշնակից համարել, սակայն թշնամի էլ չենք համարում»: Մինչ այդ համաշխարհային լրատվամիջոցներում քննարկվում էր Եգիպտոսին 1 մլրդ ԱՄՆ դոլար պարտքի մարման ԱՄՆ-ի մտադրության հարցը, որն ընդհանուր առմամբ գնահատվում էր 3,2 մլրդ դոլար[57]: Եգիպտոսին ու Թունիսին ժողովրդավարության հաջող անցում կատարած երկրների օրինակ դիտելով՝ Վաշինգտոնը որոշել էր վերջիններիս 1 մլրդ ԱՄՆ դոլարի փոխառություն տրամադրել՝ ենթակառուցվածքային նախագծերի իրականացման և աշխատատեղերի ստեղծման նպատակով: Մեծ ութնյակի գագաթնաժողովին «միջազգային բանկին» 20 մլրդ ԱՄՆ դոլարի նվիրաբերումով ԱՄՆ-ն իր աջակցությունն էր հայտնում Եգիպտոսի և Թունիսի տնտեսական բարեփոխումների գործընթացին[58]: Սակայն դեսպանատան միջադեպից հետո ԱՄՆ-ն հայտարարեց Եգիպտոսի պարտքերի մարման կամ ֆինանսական այլ օգնություն հատկացնելու՝ Վաշինգտոնի մտադրությունից հրաժարվելու մասին:

Մինչդեռ սեպտեմբերի վերջին Պեկինում 71 երկրից ավելի քան 7000 ներկայացուցչի մասնակցությամբ չին-արաբական առևտրատնտեսական ֆորում անցկացվեց, որի ընթացքում մի շարք ծրագրային փաստաթղթեր ընդունվեցին[59]: Սեպտեմբերի 28-ին՝ Նյու Յորքում ՉԺՀ-ի արտգործնախարարի և Եգիպտոսի արտգործնախարար Մուհամմեդ Քամիլ Ամրի հանդիպման ընթացքում, չին նախարարը նշեց, որ չին-եգիպտական հարաբերությունները շարունակում են ակտիվանալ, կողմերը սատարում են միմյանց և սերտ կապեր պահպանում միջազգային և տարածաշրջանային գործունեության շրջանակներում[60]:

Դեկտեմբերի 8-ին բացվեց Չինաստանի զարգացման պետական բանկի Կաhիրեի ներկայացուցչությունը, չինական դեսպանատան առևտրային բաժինը և Եգիպտոսում չինական առևտրային պալատը կազմակերպեցին երկկողմ ներդրումների և առևտրատնտեսական կապերի զարգացման ոլորտում չին-եգիպտական համագործակցության խթանման նպատակով «Չին-եգիպտական ներդրումային համագործակցության համաժողովը»[61]:

[57] Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

[58] Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, նշվ. աշխ., էջ 12:

[59] Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

[60] Ян Цзечи встретился с министром иностранных дел Египта, Xinhua, 28.09.2012. http://dknews.kz/yan-czechi-vstretilsya-s-ministrom-inostrannykh-del-egipta.htm

[61] Открылся третий «Симпозиум китайско-египетского инвестиционного сот-

Վերոշարադրյալը կարող է վկայել այն մասին, որ արաբական և աֆրիկական երկրների հետ ՉԺՀ-ի տնտեսական հարաբերությունների ամրապնդման գործընթացը չի կասեցվել «արաբական գարնան» հրդեհով: Չին փորձագետները գտնում են, որ եկել է ՄԱ-ում «նախկին չափազանց խաղաղ և փափուկ քաղաքականությունը վերանայելու ժամանակը»: Վերջիններիս համաձայն՝ Չինաստանը կարող է վերաձևակերպել իր եգիպտական քաղաքականությունը և ԱՄՆ-ին երկրից դուրս մղել եգիպտական իսլամիստներին ֆինանսական աջակցություն տրամադրելու միջոցով: Եվ եթե դա նրանց հաջողվի, ապա «եգիպտական մոդելն» արաբական արևելքում չինական քաղաքականության համար կարող է ունիվերսալ դառնալ[62]: Այս առումով միանգամայն ուշագրավ ենք համարում ՉԺՀ կատարած այցի ընթացքում Եգիպտոսի նախագահի՝ «եթե դուք պաշտպանեք մեր շահերը, մենք կպաշտպանենք ձերը…» չինացի իր գործընկերներին ուղղված Մուրսիի խոսքերը[63]:

Հարկ է նշել, որ Չինաստանը միակ խոշոր տերությունն է ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամներից, որը սերտ գործընկերային հարաբերություններ ունի մի կողմից՝ Սիրիայի ու Իրանի, մյուս կողմից՝ Սաուդյան Արաբիայի ու Քաթարի հետ: Չինաստանը նման քաղաքական և տնտեսական հաջողությունների է հասել նվազագույն ռեսուրսներով՝ միաժամանակ ձեռնպահ մնալով բարձր հռետորությունից և ցուցադրական գործողություններից[64]: Արևմտյան փորձագետների մի մասը հակված է այն մտքին, որ Չինաստանը կփորձի «տարածաշրջանում գործողությունների ազատություն» ձեռք բերել ոչ միայն հին ու նոր գործընկերների, այլև ՄԱ-ի գործերում Իրանին ակտիվ ներգրավելու հաշվին[65]: Առայժմ դժվար է հաստատել կամ հերքել Չինաստանի ցանկությունն ԱՄՆ-ի դեմ որևէ իրանաեգիպտական տանդեմի ձևավորման հարցում, սակայն նման փորձերը չեն կարող աննկատ մնալ Վաշինգտոնում: Փորձագետները կարծում են, որ եթե Չինաս-

рудничества», Жэньминь Жибао, 10.12.2012. http://russian.people.com.cn/31518/8052801.html

[62] Лузянин С., նշվ. աշխ., էջ 1:

[63] James Chen, The Emergence of China in the Middle East, The Center for Strategic Research, The Institute for National Strategic Studies, SF No. 271, December 2011, p. 6.
http://www.ndu.edu/press/lib/pdf/StrForum/SF-271.pdf

[64] СМИ: российско-китайская стратегия на Ближнем Востоке, ИноСМИ, Россия, 18.01.2012. http://www.inosmi.ru/overview/20120118/183368696.html

[65] Лузянин С., նշվ. աշխ., էջ 1:

տանի ձեռքին բավականաչափ միջոցներ կան Աֆրիկայում իր տնտեսական ներկայության ապահովման համար, ապա ԱՄՆ-ի ձեռքն էլ բավականաչափ ռեսուրսներ կան տարածաշրջանի ապակայունացման համար:

Նշենք միայն, որ Պեկինից հետո 2012 թ. օգոստոսին Եգիպտոսի նախագահ Մուրսին Թեհրանում մասնակցեց Չմիացման շարժմանը նվիրված գագաթնաժողովին, որն ԻԻՀ հիմնադրումից և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո եգիպտոսի առաջնորդի առաջին բարձրաստիճան այցն էր ԻԻՀ[66]: Իր հերթին Իրանի նախագահ Մ.Ահմեդինեժադն Իրանի առաջին նախագահն էր, որն ԻԻՀ հիմնադրումից հետո առաջին անգամ այցելեց Եգիպտոս և 2013 թ. փետրվարի 6-ին մասնակցեց Իսլամական համագործակցության կազմակերպության գագաթնաժողովին[67]: Իրանի նախագահը լրագրողներին տված հարցազրույցում նշեց, որ աշխարհի և տարածաշրջանի բարեփոխման խնդիրներում երկու երկրներն ընդհանուր կարծիքներ և գաղափարներ ունեն[68]:

Այսպիսով՝ չի բացառվում, որ Պեկինը կօգտագործի եգիպտաամերիկյան հարաբերությունների լարվածության և Մուրսիի կառավարության արտաքին քաղաքականության վերանայման ձգտումները «տարածաշրջանում առավել ամրապնդվելու և գործողությունների ազատություն» ձեռք բերելու նպատակով:

Սրան ոչ պակաս չափով կարող է նպաստել տարածաշրջանի «կայունության պահպանման» հայեցակարգի շրջանակներում ՄԱ-ի բռնապետական վարչակարգերին երկար տարիներ աջակցության ցուցաբերման ուղղությամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը, որի լույսի ներքո Չինաստանը ոչ միայն ավելի մեղմ, այլև բարեկամական երկիր է համարվում[69]:

---

[66] После 30-летнего разрыва дипотношений иранский президент впервые прибыл в Египет с визитом, Жэньминь Жибао, 06.02.2013. http://russian.people.com.cn/31519/8123732.html Եգիպտաիրանական հարաբերությունները խզվել են եգիպտաիսրայելական 1978 թ. Քեմփ Դևիդի պայմանագրի ստորագրումից և 1979 թ. ԻԻՀ հիմնադրումից հետո: Եգիպտոսը ապաստարան էր առաջարկել Իրանի շահ Ռեզա Փահլավիին երկու երկրների միջև կապերի խզումից հետո:

[67] Mixed Reception for Ahmedinejad in Egypt, Euronews, 06.02.13. http://prod-euronews.euronews.net/2013/02/06/mixed-reception-for-ahmedinejad-in-egypt/; Qin Zhongwei, Iran and Egypt in Landmark Meeting, China Daily, 04.02.2013. http://www.chinadaily.com.cn/world/2013-02/04/content_16197104.htm

[68] Mixed Reception for Ahmedinejad in Egypt, Euronews, 06.02.13.

[69] Chris Zambelis, Egypt Turns Quietly to Asia, Middle East Institute, Washington, 25.02.2013, p. 1. http://www.mei.edu/content/egypt-turns-quietly-asia

## *Լիբիա**

Քաղաքացիական պատերազմի սկզբից ևեթ ՉԺՀ-ը ձեռնպահ մնաց լիբիական զարգացումների առնչությամբ որևէ գնահատականից՝ սահմանափակվելով միայն հակամարտող կողմերին հաշտություն կնքելու հորդորներով և, ի տարբերություն Արևմուտքի, չարտահայտվելով հօգուտ Քադաֆու հեռացման[70]: Փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ն ընկած ժամանակահատվածում Պեկինը կազմակերպեց Լիբիայից ցամաքային, ծովային և օդային ուղիներով ՉԺՀ-ի 35860 քաղաքացու տարհանումը[71]: ՉԺՀ-ի պատմության մեջ առաջին անգամ Չինաստանի Ժողովրդական Ազատագրման բանակի նավատորմի (PLAN) արագընթաց հածանավը՝ ֆրեգատը, մուտք գործեց Միջերկրականի ջրերը՝ ՉԺՀ-ի քաղաքացիներին աջակցելու և տարհանելու նպատակով[72]: Նշենք, որ վերջինիս հետ կապված դժվարությունները Պեկինը կապում էր երկրում ստեղծված քաոսին վերջ դնելու ուղղությամբ Քադաֆու անկարողության հետ, որի արդյունքում «խախտվում էր» Պեկինի սրբագույն սկզբունքը՝ կայունությունը[73]: Թերևս այս պատճառով փետրվարի 26-ին ՉԺՀ-ը ՄԱԿ-ի ԱԽ-ի մյուս անդամների հետ քվեարկեց հօգուտ 1970-րդ բանաձևի ընդունման, որով քաղաքացիական բնակչության պաշտպանություն, զենքի առաքման էմբարգո, ոչ թռիչքային գոտի, թռիչքների արգելք և Լիբիայի ակտիվների սառեցում էր սահմանվում[74]: Իրականում Պեկինը հայտնվել էր պատժամիջոցներին դիմակայելու և Քադաֆու կառավարության դեմ ավելի ակտիվ գործողություններ պահանջող Արաբական Պետությունների լիգայի (ԱՊԼ) հետ իր դիրքորոշու-

* Չին-լիբիական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Арутюнян А., Вокруг китайско-ливийских отношений, Африка в глобальном мире: прошлое, настоящее и будущее. Материалы 10 Школы молодых африканистов России, Институт Африки РАН, Москва, 2011г., стр. 7-12; Հարությունյան Ա., Չինաստան-Լիբիա հարաբերությունների շուրջ, Մերձավոր Արևելք, Պատմություն. Քաղաքականություն. Մշակույթ., հ. VIII, Երևան, 2012 թ., էջ 224-237:

70 Шекоян И., Китай подбирается к Ливии, “Коммерсантъ”, № 102 (4643), 08.06.2011.

71 Чудесная операция Китая по эвакуации своих граждан из Ливии получила одобрение широкой общественности, Жэньминь Жибао, 08.03.2011.

72 Gabe Collins, Andrew S. Erickson, Implications of China’s Military Evacuation of Citizens from Libya, China Brief, The Jamestown Foundation, Vol.: 11 Issue: 4,10.03.2011, p. 8.

73 Jonas Parello-Plesner, Libya Shows China the Burdens of Being a Great Power, Economics, Politics and Public Policy in East Asia and the Pacific, East Asia Forum, 6.03.2011.

74 S/RES/1970 (2011), 26 февраля, Мир и безопасность в Африке, http://www.un.org/russian/document/scresol/res2011/index.html

մը համաձայնեցնելու դժվարին երկընտրանքի առջև[75]: Չնայած Լիբիայի նկատմամբ օտարերկրյա միջամտության ուղղությամբ զբաղեցրած բացասական դիրքորոշմանը՝ Պեկինը (ինչպես նաև Ռուսաստանը՝ ՌԴ) մարտի 17-ին չօգտագործեց իր վետոյի իրավունքը՝ կանխելու ՄԱԿ-ի ԱԽ-ի 1973-րդ բանաձևի ընդունումը[76]: Ըստ ՄԱԿ-ում ՉԺՀ-ի մշտական ներկայացուցիչ և ԱԽ-ի մարտ ամսվա նախագահող Լի Բաոդոնի՝ Պեկինը թեև մտահոգված էր Լիբիայի իրադրության վատթարացման հարցում, հատկապես ոչ թռիչքային գոտու էությունը բանաձևի հովանավորների կողմից ոչ բավարար չափով պարզաբանելու առիթով, այնուհանդերձ ՉԺՀ-ը հաշվի էր նստել Աֆրիկյան Երկրների միության (ԱԵՄ) և Լիբիայում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ բանագնացի դիրքորոշման հետ[77]: Սակայն երբ մարտի վերջին ՉԺՀ-ի նախագահ Հու Ձինթաոն բացահայտ քննադատեց Լիբիայում ՆԱՏՕ-ի գործողությունները, Արևմուտքում այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ ՉԺՀ-ն և Արևմուտքը գործնականում համակրում են լիբիական հակամարտության հակադիր ճամբարների[78]:

Հարկ է նշել, որ այնժամ, երբ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ռազմանավերը մոտենում էին Լիբիայի ափերին, Քադաֆին և Լիբիայի վերոհիշյալ արտգործնախարար Մուսա Քուսան (մարտի 19-ին) հայտարարեցին, որ Լիբիան պատրաստ է իր նավթային բլոկները տրամադրելու ՌԴ-ին, ՉԺՀ-ին և Հնդկաստանին՝ ի նշան 1973-րդ բանաձևի ձեռնպահ քվեարկման[79]: Սակայն Քադաֆու հաղթանակի շուրջ աճող կասկածները Պեկինին ստիպեցին ակտիվացնել իր դիվանագիտությունն ու բանակցել ոչ միայն պաշտոնական Տրիպոլիի, այլև ընդդիմության

[75] Zhang Yuwei, Ai Yang, Libya Declares Cease-Fire after UN Resolutions Vote, China Daily, 19.03.2011, p. 8.

[76] S/RES/1973(2011), 17 марта Положение в Ливии, http://www.un.org/rusian/documen/scresol/res2011/index.html
Մարտի 17-ին ՄԱԿ-ի ԱԽ-ը Լիբիայի վերաբերյալ բանաձև ընդունեց, որով նախատեսվում էր Լիբիայում ոչ թռիչքային գոտի հաստատել, ինչպես նաև անհրաժեշտ բոլոր միջոցառումները ձեռնարկել (բացի ցամաքային հարձակումից)՝ ապստամբների հսկողության տակ գտնվող քաղաքների ու բնակավայրերի ռմբահարումները կանխելու և խաղաղ բնակիչներին պաշտպանելու նպատակով: ՄԱԿ-ի ԱԽ-ի հավանությամբ մարտի 19-ին Լիբիայում սկսվեցին կոալիցիոն ուժերի գործողությունները՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Բելգիայի, Իտալիայի, Իսպանիայի, Դանիայի, Նորվեգիայի մասնակցությամբ:

[77] Libya Declares Cease-fire after UNR Vote, China Daily, 19.03.2011, p. 8.

[78] Габуев А., У Китая к Ливии дело на $19 млрд, Газета «Коммерсантъ, №111 (4652), 22.06.2011.

[79] Al-Jazeera, 19.03.2011.

հետ[80]: Եգիպտոսում ՉԺՀ-ի դեսպանատան որոշ դիվանագետներ (մայիսին) եղան Բենգազիում՝ պարզաբանելու հումանիտար խնդիրների և չինական կապիտալի վրա հիմնված ձեռնարկությունների հետ կապված իրավիճակը: Չին դիվանագետները հանդիպեցին նաև Անցումային ազգային խորհրդի (ԱԱԽ) պատասխանատու պաշտոնյաների հետ[81], որից հետո Պեկինն ապստամբներից 160 մլն ԱՄՆ դոլարի նավթ գնեց[82]: Հունիսի 7-ին Պեկինը հյուրընկալեց Տրիպոլիի «հատուկ բանագնաց»՝ Լիբիայի արտգործնախարար Աբդուլաթի ալ-Օբեյդիին[83]: Հունիսի 6-ին ՉԺՀ-ի ԱԳՆ-ի Արևմտյան Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի վարչության պետը՝ Չէն Սյաոդունը, Բենգազիում հանդիպեց Լիբիայի ԱԱԽ-ի ղեկավարության հետ՝ վերջինիս դիտելով իբրև «երկխոսության կարևոր կողմ»: ԱԱԽ-ը հաստատեց, որ կպաշտպանի ընդդիմության վերահսկողության տակ գտնվող տարածքներում բնակվող չինացի քաղաքացիների կյանքի և գույքի անվտանգությունը[84]: Նշենք, որ հանդիպումից մեկ շաբաթ առաջ Քաթարում ՉԺՀ-ի դեսպան Չժան Չժիլյանը Դոհայում հանդիպում էր ունեցել ԱԱԽ-ի ղեկավար Մուստաֆա Աբդել-Ջալիլի հետ[85]: ՉԺՀ-ի փոխարտգործնախարար Չժան Ցզյունը հունիսի 15-ին ՄԱԿ-ի՝ Նյու Յորքի կենտրոնակայանում լիբիական խնդրին նվիրված ԱԽ-ի նստաշրջանին հայտարարեց, որ միջազգային հանրությունը պետք է նպաստի հակամարտության քաղաքական կարգավորմանը[86]: Իսկ հունիսի 22-ին ՉԺՀ-ի արտգործնախարարը Պեկինում հյուրընկալեց Լիբիայի ԱԱԽ-ի գործկոմի ղեկավար և արտաքին հարաբերությունների գծով պատասխանատու Մահմուդ Ջիբրիլին՝ ԱԱԽ-ը գնահատելով իբրև «երկխոսության կարևոր գործընկեր»:

Այսպիսով՝ Պեկինը ստանձնեց լիբիական հակամարտության միջնորդությունը և պաշտոնապես հայտարարեց իր խաղաղապահ հավակնությունների մասին՝ ակտիվ բանակցություններ

[80] Габуев А., նշվ. աշխ., էջ 1:

[81] Китай продолжает контакты с ливийской оппозицией, Подробности, 07.06.2011.

[82] James M. Dorsey, China Taking Leaf out of Russia's Script for Libya with More Activist Policy, Al-Arabiya, UAE, 22.06.2011. http://english.alarabiya.net/articles/2011/06/22/154304.html

[83] Шекоян И., նշվ. աշխ., էջ 1:

[84] Глава департамента стран Азии и Африки МИД КНР Чэнь Сяодун посетил Бенгази, Жэньминь Жибао, 07.07.2011.

[85] Габуев А., նշվ. աշխ., էջ 1:

[86] Китай: ливийский вопрос не должен решаться силой, Жэньминь Жибао, 16.06.2011.

սկսելով երկու կողմերի հետ միաժամանակ: Տրիպոլիի և Բենգազիի հետ շփումների մակարդակով և «հաշտության բանակցություններին նպաստելու» գործում Պեկինը գերազանցեց մյուս պետություններին, այդ թվում՝ լիբիական ճգնաժամի պաշտոնական միջնորդի դեր ստանձնած ՌԴ–ին և ԱԵՄ–ին[87]:

Խնդիրն այն է, որ Պեկինը «ցանկացած եղանակի» դեպքում և, անկախ առճակատման ելքից, Լիբիայում իր գործարար շահերի պաշտպանության կարիքն ուներ և զգուշանում էր, որ լիբիական զարգացումները չինական գործարար շրջանակների համար չշրջվեն տնտեսական անդառնալի կորուստներով[88]: Նշենք, որ մինչ 2011 թ. սկիզբը, այսինքն՝ նախքան Լիբիայի քաղաքացիական պատերազմը, ՉԺՀ–ը լայնորեն ներկայացված էր Լիբիայի նավթային սեկտորում, երկաթուղային, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներում[89], Լիբիայում բնակվում էր նշյալ ոլորտներին պատկանող 75 ընկերությունում աշխատող 36 000 ՉԺՀ–ի քաղաքացի, չինական ներդրումները գնահատվում էին 18 մլրդ դոլար[90]: ՉԺՀ–ը դարձել էր լիբիական նավթի երրորդ խոշորագույն սպառողը՝ կազմելով Լիբիայից արտահանվող նավթի ծավալների 10 %–ը, իսկ ՉԺՀ մատակարարվող նավթի լիբիական մասնաբաժինը կազմում էր 3,5 %[91]:

Չինական նավթային խոշոր ընկերությանը (CNPC) պատկանող նախագծերը գտնվում էին արևմուտքում՝ Քադաֆիի զորքերի վերահսկողության ներքո, իսկ Լիբիայի արևելքում չինական մասնակցությամբ մի շարք ենթակառուցվածքային նախագծեր հայտնվել էին ապստամբների վերահսկողության տակ:

[87] China Says Libya Rebels as Important Political Force, China Military Power Mashup, 22.06.2011.

[88] Այժմ Լիբիայում չինական ընկերությունների կորուստները հաշվվում էին 20 մլրդ ԱՄՆ դոլար:

[89] Երկաթգծերի կառուցման և հաղորդակցության ընկերությունը (Comunication Construction and China Railway Construction Corporation) զբաղվում էր երկաթգծերի նախագծմամբ և կառուցմամբ, Չինաստանի քաղաքացիական շինարարության ինժեներական ընկերությունը (China Civil Engineering Construction) զբաղվում էր Արևելյան Սահարայի ոռոգման նախագծերի իրականացմամբ, Չինաստանի Գեճուբա Գրուպ ընկերության (China Gezhouba Group Corporation (CGGC)) չինական խումբը զբաղված էր Լիբիայի հարավային հինգ քաղաքներում առանձնատների կառուցման նախագծերով, Huawei Technologies ընկերությունը զբաղված էր բջջային հեռախոսների ենթակառուցվածքի ստեղծմամբ: Տե՛ս Giampaolo Tarantino, Il petrolio della Libia fa gola alla Cina, L’Occidentale, Italy, 04.03.2011.

[90] African Revolutions Challenge Chinese Diplomacy, նշվ. աշխ., էջ 1:

[91] Rodger Baker, Portfolio: China’s Stake in the Middle East Unrest, Stratfor, USA, 10.03.2011.

ՉԺՀ-ը պատրաստ էր չինական նախագծերի անվտանգության երաշխիքների դիմաց Քադդաֆուն աջակցություն ապահովել ՄԱԿ-ի ԱԽ-ում, իսկ ապստամբներին՝ ֆինանսական օգնություն տրամադրել[92]: Վերջիններիս աջակցելու դեպքում շահավետ պայմանագրերով փոխհատուցվելու ուղղությամբ տրված բազմաթիվ խոստումները ևս նպաստում էին, որպեսզի Պեկինը «նահանջի» իր չմիջամտության սկզբունքից[93]: Նշենք, որ Պեկինին դուր չէին եկել ընդդիմության դեմ «Տիանանմեն» կազմակերպելու ուղղությամբ Քադդաֆու հնչեցրած սպառնալիքները[94]:

ՉԺՀ-ին չէին կարող չմտահոգել նաև երկրի էներգետիկ ոլորտը վերակառուցելու ուղղությամբ ԱԱԽ-ի հայտարարությունները, որոնց համաձայն՝ վերջինս մտադիր էր Քադդաֆու դաշնակից չինական և ռուսական էներգետիկ ընկերություններին փոխարինել ապստամբներին աջակցություն ցուցաբերած այնպիսի ընկերություններով, ինչպիսիք են “British Petroleum”-ը, ֆրանսիական “Total”-ը և իտալական “Eni”-ն[95]: Ըստ ԱԱԽ-ի առաջնորդ Աբդուլ Ջալիլի՝ դաշնակիցներն ապստամբներին ցուցաբերած օգնության դիմաց պետք է արժանանային «արտոնյալ վերաբերմունքի», իսկ ՆԱՏՕ-ի գործողություններին «չաջակցող երկրները», այդ թվում՝ ՌԴ-ը, ՉԺՀ-ը և Գերմանիան, ինչպես նաև Քադդաֆուն չդատապարտող երկրները պետք է հայտնվեին «պարտվողների շարքում»[96]: Ապստամբների տնօրինությանն անցած Արաբական ծոցի նավթային ընկերության՝ “Agoco”-ի (Arabian Gulf Oil Company) ներկայացուցչի համաձայն՝ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի շահերը ՌԴ-ի, ՉԺՀ-ի և Բրազիլիայի համեմատությամբ պետք է առաջնային դիտվեին[97]:

---

[92] Габуев А., նշվ. աշխ., էջ 1:

[93] Ливия: Китай пытается поладить и с мятежниками, и с Каддафи, RTKORR.com, 08.06.2011.

[94] Andrew Higgins, For China, Relations with Libya a Balancing Act, The Washington Post, 26.08.2011. 1989 թ. փետրվարյան ելույթի ժամանակ Քադաֆին ապստամբներին խոստացել էր «միջատների պես բնաջնջել»՝ ժողովրդական անկարգությունների ճնշման օրինակ բերելով ՉԺՀ-ում 1989 թ. տիանանմենյան իրադարձությունները:

[95] New Leaders May Expel Russia and China from Libyan Energy Sector, World Tribune, USA, 25.08.2011. Այս ընկերությունների բաժնետոմսերը զգալիորեն թանկացան օգոստոսի 22-ին՝ Քադաֆու վարչակազմի տապալումից հետո:

[96] Emma Farge, Lorraine Turner, John Irish, How to Win Business in Libya, Fox News, USA, 23.09.2011.

[97] Terry Macalister, So, was This a War for Oil?, The Guardian, Great Britain, 02.09.2011. Այս հայտարարությունից հետո ՉԺՀ-ի առևտրի նախարարության պատասխանատու պաշտոնյան հայտնեց, որ Պեկինը հույս ունի, որ Լիբիան կայունության հաստատումից հետո կշարունակի պաշտպանել չի-

Ավելին՝ սեպտեմբերի սկզբին լիբիական ապստամբների զինվորական կոմիտեի ղեկավար Օմար Հարիրին Պեկինին մեղադրեց Քադաֆիի բանակին զենք մատակարարելու և Լիբիայի հաշիվների արգելափակումը կանխելու փորձերի մեջ[98]: Ըստ "The globe and mail" կանադական ամսագրի՝ լիբիական պատվիրակությունը հուլիսի 16-ին ՉԺՀ կատարած այցի ընթացքում հանդիպել էր չինական զենք արտադրող պետական 3 ընկերության[99] ներկայացուցիչների հետ, որոնք համաձայնվել էին մոտ 200 մլն ԱՄՆ դոլարի զենք ու զինամթերք մատակարարել Քադդաֆու կառավարությանը: Գործարքը պետք է իրականացվեր Հարավաֆրիկյան Հանրապետության և Ալժիրի միջոցով[100]: Բանակցությունների հետագա փուլը նախատեսվում էր անցկացնել Ալժիրում՝ չինական ընկերությունների գրասենյակներում[101]: Սակայն ՉԺՀ-ի ԱԳՆ-ն սեպտեմբերի 5-ին հերքեց Քադդաֆու վարչախմբին զենք վաճառելու հնարավորությունը՝ ընդունելով միայն, որ լիբիական պաշտոնյաները առանց պաշտոնական Պեկինի իմացության բանակցություններ են վարել չինական համապատասխան ընկերությունների որոշ ներկայացուցիչների հետ՝ քննարկելով զենքի վաճառքի հնարավորությունը[102]: Սակայն, ըստ ՉԺՀ-ի ԱԳՆ-ի, վերջիններս զինամթերքի վաճառքի, առավել ևս դրա Լիբիա արտահանման վերաբերյալ որևէ պայմանագիր չեն ստորագրել, քանի որ Պեկինը ի սկզբանե խստորեն հետևել է ՄԱԿ-ի ԱԽ-ի 1970-րդ և 1973-րդ բանաձևերին[103]:

նացի ներդրողների շահերն ու իրավունքները, և կշարունակվեն ներդրումներն ու տնտեսական համագործակցությունը: Տե՛ս China Looks to Protect its Assets in a Post-Gaddafi Libya, Guardian, 23.08.2011.

98 Серова Н., Китайская перестройка потрясет мир, Центр Азия, 08.09.2011.

99 China North Industries Corp. (Norinco); China National Precision Machinery Import & Export Corp. (CPMIC); China XinXing Import & Export Corp..

100 Ливийский ПНС обещает «наказать» Китай за поставки оружия Каддафи, rosvoenpens.ru, 6.09.2011, с. 1.
http://rosvoenpens.ru/новости/ливийский-пнс-обещает-наказать-китай/
Աղբյուրի համաձայն՝ գործարքի վերաբերյալ փաստաթղթերը, որոնց վրա եղել է լիբիական պետական կնիքը, հայտնաբերվել են Քադաֆիի նախկին նստավայր Տրիպոլիի Բաբ-Աքքար թաղամասի աղբարկղերից մեկում:

101 Ливийский ПНС обещает «наказать» Китай за поставки оружия Каддафи, նշվ. աշխ., էջ 1:
Հարկ է նկատել, որ Արևմուտքը, ի դեմս ԱՄՆ-ի պետքարտուղարության, ԿՀՎ-ի, ինչպես նաև Հյուսիսատլանտյան դաշինքի, հայտնեց, որ տեղյակ չէ լիբիական վարչախմբի և Չինաստանի միջև գաղտնի բանակցությունների մասին:

102 Arthur Bright, China Denies Arms Sales to Qaddafi, Admits Meetings Took Place, Christian Science Monitor, USA, 05.09.2011.

103 Китайская сторона не экспортировала в Ливию военную продукцию-официальный представитель МИД-а, Жэньминь Жибао, 06.09.2011.

Ի վերջո ՉԺՀ-ը սեպտեմբերի 1-ին դիտորդի դերում մասնակցեց Փարիզում «Լիբիայի բարեկամների» համաժողովին[104]: ՉԺՀ-ի ԱԳՆ-ի պաշտոնական ներկայացուցիչ Ցզյան Յույը 2011 թ. սեպտեմբերի 5-ի մամլո ասուլիսի ժամանակ նշեց, որ «ԱԱԽ-ի ճանաչման որոշումը պետք է լինի ճիշտ ժամանակին»: Այդժամ Չինաստանը դեռևս պատրաստ չէր ճանաչելու ԱԱԽ-ը, քանի որ Չինաստանի և Լիբիայի միջև դեռևս մի շարք խնդիրներ լուծված չէին, այդ թվում՝ նավթի ոլորտում առևտրային պայմանագրերի և համաձայնագրերի ճակատագիրը: Չէր լուծվել նաև «մեկ Չինաստանի քաղաքականության» հարցը, քանի որ այդ պահին հստակ չէր ԱԱԽ-ի դիրքորոշումը Թայվանի հանդեպ[105]: Եվ երբ որ կողմերը համաձայնության եկան նշյալ խնդիրների շուրջ, սեպտեմբերի 12-ին Պեկինը պաշտոնապես ճանաչեց ԱԱԽ-ը՝ որպես Լիբիայի միակ օրինական իշխանություն և լիբիական ժողովրդի ներկայացուցիչ՝ ակնկալելով, որ նախկինում ստորագրված չին-լիբիական բոլոր համաձայնագրերը կմնան ուժի մեջ և բարեխղճորեն կիրագործվեն[106]: Իր հերթին ԱԱԽ-ն, ընդգծելով *Պեկինի որոշման երկար սպասված լինելու փաստը*, հաստատեց նախկինում ստորագրված համաձայնագրերը ճշտորեն իրագործելու և «մեկ Չինաստանի» ընդունման Լիբիայի նախկին քաղաքականությանն իր հավատարմությունը՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով այդուհետ ևս ՉԺՀ-ի հետ զարգացնել փոխշահավետ համագործակցություն[107]: Հոկտեմբերի 28-ին Լիբիայում ՉԺՀ-ի դեսպան Վան Վենշենը վերադարձավ Լիբիա[108]:

Բարձր մակարդակի հաջորդ բանակցությունները տեղի ունեցան ՉԺՀ-ի արտգործնախարարի և ԱԱԽ-ի ղեկավարի միջև 2011 թ. սեպտեմբերի 20-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի՝ Լիբիային նվիրված նստաշրջանին[109]: Պեկինը խոստացավ Լիբիայում խաղաղության և կայունության վերականգնման գործում

[104] Китай будет в качестве наблюдателя принимать участие в конференции «друзей Ливии» в Париже, Жэньминь Жибао, 01.09.2011.

[105] Пахомова М., Китайско-ливийские отношения накануне и после «арабской весны» 2011 г., Синология.ру. http://www.synologia.ru/a/%D0%9A%D0%B8%D1%82%D0%B0%D0%B9%D1%81%D0%BA%D0%BE-%D0%BB%D0%B8%D0%B2%D0%B8%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5_%D0%BE%D1%82%D0%BD%D0%BE%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F.

[106] Emma Farge, Lorraine Turner, John Irish, նշվ. աշխ., էջ 1:

[107] Китайская сторона объявила о признании ПНС Ливии, Жэньминь Жибао, 13.09.2011.

[108] Пахомова М., նշվ. աշխ., էջ 1:

[109] Նույն տեղում:

աջակցել միջազգային հանրությանը[110]: Նշենք, որ դեռևս հուլիսի 11-ին Պեկինը հայտարարել էր Լիբիայի ժողովրդին 55 մլն ՉԺՀ յուանի (7,7 մլն ԱՄՆ դոլար) մարդասիրական օգնություն տրամադրելու իր որոշման մասին[111]:

ԱԱԽ-ի ճանաչումից անմիջապես հետո Չինաստանը ձեռնամուխ եղավ Լիբիայում իր դիրքերի ամրապնդմանը՝ աջակցություն առաջարկելով երկրի հետպատերազմյան վերականգնման գործին: Չինաստանը Լիբիային տրամադրեց 50 մլն յուան՝ 7,7 մլն ԱՄՆ դոլար: Լիբիային օգնություն տրամադրելու խնդիրը քննարկվեց նաև 2012 թ. փետրվարին Աֆրիկական երկրների 18-րդ գագաթնաժողովին:

Սակայն ԱԱԽ-ի դիվանագիտական ճանաչումից հետո ՉԺՀ-ի կառավարության առջև մի շարք խնդիրներ ծառացան՝ կապված Լիբիայում չինացի քաղաքացիների անվտանգության ապահովման, Լիբիայի կառավարական շրջանակներում և զինված ուժերում իրավիճակի կայունության հետ: Խնդիրներ էին ծագել նաև Պեկինի կողմից ԱԱԽ-ին երկար չճանաչելու և լիբիական ԶԼՄ-ներում Չինաստանի տրամադրած օգնության փաստի ոչ բավարար լուսաբանման առնչությամբ Լիբիայի կառավարության մի մասի մոտ Չինաստանի հանդեպ տածած անվստահության փաստի հետ: Վերջնական լուծում չէր ստացել չինական ընկերությունների կրած վնասների փոխհատուցման խնդիրը: Այդ իսկ պատճառով Լիբիայի իրադրության անվտանգության գնահատման նպատակով 2012 թ. փետրվարի 4-8-ը Լիբիա մեկնեց չինական կառավարական հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում էին ինչպես կառավարության, այնպես էլ Լիբիայում գործող առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը պետք է հեղափոխության ընթացքում չինական ընկերությունների կրած վնասների փոխհատուցման նպատակով խորհրդակցեր Լիբիայում մեծությամբ երկրորդ՝ Սահարայի բանկի հետ: Բանակցությունների ընթացքում Չինաստանն ու Լիբիան պայմանավորվեցին հատուկ մարմինների դատին հանձնել չինական ընկերությունների մասնակցությամբ պատերազմից առաջ հաստատված նախագծերի հետ կապված խնդիրների կարգավորումը: Նշենք,

[110] Своевременное регулирование политики Китая по отношению к Ливии свидетельствует о зрелом и стабильном дипломатическом стиле КНР, Russian.china.org.cn, 13.09.2011. http://russian.china.org.cn/news/txt/2011-09/13/content_23404709.htm

[111] Китай предоставит ливийскому народу гуманитарную помощь в размере 50 млн юаней, Жэньминь Жибао, 11.07.2011.

որ նախքան այդ չինական ընկերությունների մեծ մասն իր աշխատակազմն արդեն ուղարկել էր Լիբիա[112]:

Չնայած բարձր մակարդակի միանգամայն ակտիվ շփումներին, ի դեմս ՉԺՀ-ի ԱԳՆ-ի Ասիայի և Աֆրիկայի երկրների վարչության ղեկավարի, Լիբիայում 2012 թ. մայիսին, ինչպես նաև Սի Ծինպինի ու Լիբիայի արտգործնախարար Աշուր Բին Խայալի միջև 2012 թ. հունիսի 11-ին տեղի ունեցած բանակցություններին՝ կողմերի միջև որևէ համաձայնություն ձեռք չէր բերվել չինական կողմի կրած կորուստների փոխհատուցման ուղղությամբ[113]:

2013 թ. փետրվարի 5-ին՝ Լիբիայում ՉԺՀ-ի դեսպան Վան Վենշենի հետ Լիբիայի ժամանակավոր կառավարության վարչապետ Ալի Զեյդանի հանդիպման ընթացքում, վերջինս նշեց, որ Լիբիայի կառավարությունն ու ժողովուրդը ողջունում են չինական ձեռնարկությունների հնարավորինս արագ վերադարձը Լիբիա և չինական ընկերությունների ընդհատված արտադրությունների վերսկսումը[114]:

Այսպիսով՝ վերոշարադրյալից կարող ենք գալ այն եզրահանգման, որ Լիբիայի քաղաքացիական պատերազմի ընթացքում ՉԺՀ-ի տարածաշրջանային քաղաքականությունն իսկական փորձության ենթարկվեց՝ կապված Պեկինի որդեգրած տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, չմիջամտության հայեցակարգի հետ: Վերջինիս հետամուտ լինելու դեպքում Պեկինի համար բարդանում էր Աֆրիկայի հետ համագործակցության խորացման, մայրցամաքի ենթակառուցվածքային, էներգետիկ, հեռահաղորդակցության և այլ ոլորտներում իր հսկայական ծրագրերի իրականացման, ինչպես նաև Չինաստանի հարյուր հազարավոր քաղաքացիների աշխատելու խնդիրը[115]: Իր տարածաշրջանային շահերի պաշտպանության ուղղությամբ ակտիվ միջնորդական առաքելություն ստանձնելով՝ Պեկինը հիմնարար փոփոխություն մտցրեց իր կողմից տասնյակ տարիներ հետապնդվող չմիջամտության հայեցակարգում: Եթե մինչ այդ Չինաստանը տարածաշրջանում մեկը մյուսի հետևից առևտրային գործարքներ կնքող չեզոք տերություն էր, ապա լիբիական

---

112 Пахомова М., Китайско-ливийские отношения накануне и после «арабской весны» 2011 г., նշվ. աշխ., էջ 1:

113 Նույն տեղում:

114 Правительство Ливии приветствует возвращение китайских предприятий в Ливию, Жэньминь Жибао, 06.02.2013. http://russian.people.com.cn/31520/8123703.html

115 Jonas Parello-Plesner, China's Desert-Dance in Libya, European Council on Foreign Relations, 31.10.2011.

զարգացումների ընթացքում այն միջազգային նոր կարգավիճակ ստանձնող երկիր էր: Չինաստանն արթնացավ «նիրհից», իսկ Լիբիայի քաղաքացիական պատերազմը իրադարձություն էր, որը ստիպեց Չինաստանին դուրս գալ իր «պատյանից»[116]:

### *Սիրիա**

Ինչ վերաբերում է սիրիական իրադարձություններին, ապա հակառակ այս պետությունում ունեցած թվացյալ «ոչ մեծ շահերին»՝ հակակառավարական շարժման հենց սկզբից Պեկինը համառորեն պնդում էր, որ իր դաշնակից Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը չպետք է Արևմուտքի պահանջով ստիպողաբար հրաժարվի իշխանությունից: Չինաստանը բազմիցս հատուկ բանագնացներ ուղարկեց տարածաշրջան՝ Սիրիայի և հարևան պետությունների միջև բանակցություններ վարելու միջոցով շահագրգիռ կողմերի հետ կապերի հաստատման և երկխոսության միջոցով խնդրի կարգավորման, ինչպես նաև մարդասիրական օգնության տրամադրման նպատակով[117]: 2011 թ. հունիսի 15-ին Պեկինը Մոսկվայի հետ միասին բողոքարկեց սիրիական ընդդիմության ճնշման նպատակով Դամասկոսի կոշտ միջոցառումների դեմ բանաձևի մշակման քննարկման նպատակով ՄԱԿ-ի ԱԽ-ի հանդիպումը՝ միաժամանակ չարդարացնելով Բաշար ալ-Ասադի դեմ ՄԱԿ-ի նախատեսվող գործողությունները[118]: Իսկ 2011 թ. հոկտեմբերի 4-ին, վետո դնելով հակակառավարական ուժերի ճնշման առնչությամբ Սիրիային դատապարտող ԱԽ-ի բանաձևի վրա, Չինաստանն ու Ռուսաստանը փաստացի կերպով փրկօղակ նետեցին Սիրիայի նախագահին[119]:

---

[116] Gideon Dresdner, China, the Arab Spring, and Context, Institute of Strategic Thinking, 23.08.2011.

* Չին-սիրիական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Harutyunyan A., New Manifestations in the Sino-Syrian Cooperation, Contemporary Eurasia. Arab World, Vol. 1 (2), Yerevan, 2012, pp. 140-155; Հարությունյան Ա., Չին-սիրիական համագործակցության նոր դրսևորումներ, Ժամանակակից Եվրասիա. Արաբական աշխարհ, Հատոր 1 (2), Երևան, 2012 թ., էջ 140-155:

[117] Ruan Zongze, Responsible Protection: Building a Safer World, CIIS Time, 15.06.2012.http://www.ciis.org.cn/english/2012-06/15/content_5090912.htm

[118] Россия и Китай бойкотируют переговоры ООН по Сирии, AFP, Франция, 14.06.2011. http://inosmi.ru/asia/20110614/170670904.html

[119] Neil MacFarquhar, With Rare Double U.N. Veto on Syria, Russia and China Try to Shield Friend, The New York Times, USA, 05.10.2011. http://www.nytimes.com/2011/10/06/world/middleeast/with-united-nations-veto-russia-and-china-help-syria.html?r=2&pagewanted=all

Բանաձևի նախագիծը նախատեսում էր սիրիական իշխանությունների կող-

Պեկինն ու Մոսկվան համոզված էին, որ ՆԱՏՕ-ի անդամները ցանկանում են Սիրիայի վերաբերյալ բանաձևի ընդունման հասնել՝ մանիպուլյացիայի ենթարկելով ԱԽ-ը, ինչը նրանց հաջողվեց Լիբիայի վերաբերյալ բանաձևի ընդունման ժամանակ, որի հետևանքով, իբրև «Քադաֆիի օդուժի ռմբակոծություններից խաղաղ բնակչության պաշտպանությանն» ուղղված միջոց, ապստամբների զինման և ՆԱՏՕ-ի ռազմական գործողությունների ակտիվացման արդյունքում Լիբիայի նախագահի վարչախումբը տապալվեց[120]: Այդ էր թերևս պատճառը, որ Ռուսաստանն ու Չինաստանը մտադիր էին կանխել նման սցենարի կրկնությունը ոչ միայն Սիրիայում, այլև ողջ մերձավորարևելյան և այլ տարածաշրջաններում:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Սյուզան Ռայսը դատապարտեց վետոյի իրավունքից Չինաստանի ու Ռուսաստանի օգտվելու փաստը[121]: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Վիլյամ Հեյգը քննադատեց Ռուսաստանին ու Չինաստանին ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևի վրա վետո դնելու միջոցով «կոշտ վարչախմբի պաշտպանության» մեջ՝ միաժամանակ գովաբանելով բրիտանական կառավարության դերն «արաբական գարնան» առնչությամբ և կոչ անելով ՄԱ-ի և այլ տարածաշրջանների երկրներին սեփական ժողովրդի դժգոհություններին պատասխանել «երկխոսությամբ ու բարեփոխումներով, ոչ թե ճնշումներով ու պատժամիջոցներով»[122]:

Հատկանշական է, որ ՉԺՀ-ի ԱԳՆ-ն պաշտպանեց 2011 թ. դեկտեմբերի 14-ին Ռուսաստանի կողմից ՄԱԿ-ի ԱԽ-ին ներկայացված Սիրիայի վերաբերյալ բանաձևի նախագիծը: «Եթե ԱԽ-ում Սիրիայի իրադրության վերաբերյալ քննարկում է գնում, ապա այդ քննարկումը պետք է նպաստի իրադրության լարվածության թուլացմանը, քաղաքական երկխոսության կոչ պարունակի, հակա-

---

մից ընդդիմության նկատմամբ ճնշամիջոցների շարունակման դեպքում Դամասկոսի դեմ պատժամիջոցների կիրառում, որը, ըստ ՉԺՀ-ի, չէր բացառում ռազմական միջամտության հնարավորությունը և Սիրիայում «լիբիական սցենարի» կրկնությունը:

[120] Тавитов В., Почему Китай поддерживает Сирию? Modern Politics Russia, 30.09.2012. http://modernpolitics.ru/2012/09/pochemu-kitajj-podderzhivaet-siriyu/

[121] Don Kraus, Russia and China: UN-Responsible on Syria, The Huffington Post, USA, 06.10.2011. http://www.huffingtonpost.com/don-kraus/syria-united-nations-veto_b_997055.html

[122] Hélène Mulholland, Hague Accuses Russia and China of ‘Siding with Brutal Regime’ in Syria, The Guardian, UK, 05.10.2011. http://www.guardian.co.uk/politics/2011/oct/05/hague-russia-china-siding-syria

մարտող կողմերի միջև կամուրջներ հաստատի և տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն ապահովի»,— հայտարարեց ՉԺՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Լյու Վեյմինը: Լրագրողների համար տրված մամլո ասուլիսի ընթացքում չինացի դիվանագետը հայտարարեց, որ Պեկինը պաշտպանում է ռուսական առաջարկը՝ իր հիացմունքն արտահայտելով սիրիական ճգնաժամի լուծման ուղղությամբ Ռուսաստանի գործադրած ջանքերի առնչությամբ, ինչպես նաև իր պատրաստակամությունը հայտնելով բոլոր կողմերի հետ կապեր պահպանելու ուղղությամբ[123]:

Իսկ 2012 թ. սկզբին Պեկինն Արաբական Պետությունների լիգայի (ԱՊԼ) ղեկավարությանը տեղյակ պահեց, որ հանդես է գալիս «սիրիական դոսյեն» ԱԽ-ի դատին հանձնելու դեմ, և գտնում է, որ ճգնաժամը պետք է կարգավորվի համաարաբական կազմակերպության շրջանակներում[124]:

Ռուսաստանն ու Չինաստանը 2012 թ. փետրվարի 4-ին ԱԽ-ում քվեարկեցին սիրիական խնդիրը ռազմական ճանապարհով լուծում պարունակող բանաձևի նախագծի դեմ, որն առաջարկել էր Մարոկոյի պատվիրակությունը մի շարք արևմտյան և արաբական երկրների հետ: Դժգոհություն առաջացրեց հատկապես բանաձևի այն կետը, որով նախագահ Բաշար ալ-Ասադից պահանջվում էր երեք շաբաթվա ընթացքում ազատել նախագահի պաշտոնը[125] և իշխանությունը փոխանցել իր տեղակալին[126]: Պեկինի կարծիքով նման բանաձևի ընդունումը կարող էր միջազգային հանրության աջակցության ազդանշան ծառայել վարչախմբի հակառակորդների ու զինված խմբավորումների համար[127]: ՉԺՀ-ն նաև իր ափսոսանքն էր արտահայտում Սիրիայի վերաբերյալ բանաձևի նախագծի վերանայման ուղղությամբ Ռուսաստանի առաջարկությունն անտեսելու համար[128]:

[123] Ben Blanchard, Sabrina Mao, China Says Supports Russian Resolution on Syria, Reuters, UK, 19.12.2011. http://www.reuters.com/article/2011/12/19/us-syria-china-russia-idUSTRE7BI0IX20111219

[124] Китай выступил против иностранного вмешательства в сирийский кризис, РИА Новости, 12.01.2012. http://ria.ru/arab_sy/20120112/538005266.html

[125] Китай отказался участвовать во встрече «друзей Сирии», РосБизнесКонсалтинг, 23.02.2012г., http://top.rbc.ru/politics/23/02/2012/638992.shtml

[126] China Opposes Armed Intervention in Syria, Chinadaily.com.cn, 17.02.2012. http://www.chinadaily.com.cn/china/2012-02/17/content_14628079.htm

[127] Китай защищает свою позицию по Сирии, 6.02.2012, Би-би-си. http://www.bbc.co.uk/russian/international/2012/02/120205_syria_china_russia.shtml

[128] Китай выразил сожаление, что «разумное» предложение России по проекту резолюции по Сирии было проигнорировано, Жэньминь Жибао, 05.02.2012. http://russian.people.com.cn/31520/7719825.html

Բնականաբար, Բաշար ալ-Ասադը և իր կողմնակիցներն իրենց գոհունակությունն արտահայտեցին Ռուսաստանի և Չինաստանի վետոյի առնչությամբ: Սակայն այն արժանացավ ոչ միայն ԱՄՆ-ի (Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՊԼ-ի)[129], այլև սիրիական «Մուսուլման եղբայրների» ցասումնալից արձագանքին, որոնք Ռուսաստանին, Չինաստանին ու Իրանին անվանեցին Սիրիայի խաղաղ բնակչության «սպանությունների մեղսակիցներ»՝ մեղադրելով նրանց Ասադի վարչախմբին ցուցաբերվող քաղաքական «աջակցության» և «զենքի առաքման» մեջ[130]: ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլլարի Քլինթոնը քննադատության ենթարկեց Ռուսաստանին ու Չինաստանին Դամասկոսի դեմ միջոցներ ձեռնարկելու գործում ԱԽ-ին խոչընդոտներ հարուցելու մեջ, այն դեպքում, երբ ավելի քան 60 պետություններ մտադիր էին իրենց «խաղաղասիրական առաքելությունները» տեղակայել Սիրիայում[131]: ԱՄՆ-ի պետքարտուղարը կոչ էր անում «ժողովրդավարական Սիրիայի բարեկամներին» համախմբել իրենց ջանքերն ընդդիմությանը ցուցաբերվող աջակցության գործում[132]:

Վետոյի խնդիրը, որը Մոսկվան ու Պեկինը դրեցին Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևի վրա, քննարկվեց նաև 2012 թ. փետրվարի 14-ին ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի, փոխնախագահ Ջո Բայդենի և ԱՄՆ-ի այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ ՉԺՀ-ի փոխնախագահ Սի Ծինպինի հետ բանակցությունների ընթացքում: Պետքարտուղարությունում Բայդենը նշեց, որ ԱՄՆ-ը կտրականապես համաձայն չէ «Բաշար ալ-Ասադի վարչախմբի կողմից իրականացվող դաժան բռնության» վերաբերյալ բանաձևի վրա Մոսկվայի և Պեկինի դրած վետոյի հետ[133]:

[129] Tony Caron, Russia and China Challenge the West on Syria: What Implications for Iran? Time, USA, 06.02.2012. http://world.time.com/2012/02/06/russia-and-china-challenge-the-west-on-syria-what-implications-for-iran/

[130] «Братья мусульмане» критикуют Россию, Китай и Иран, Cyberpresse.ca, Канада, 07.02.2012. http://www.inosmi.ru/asia/20120207/185167442.html

[131] Clinton Blasts Russia, China for Opposing Action on Syria, USA Today, USA, 25.02.2012. http://www.usatoday.com/news/world/story/2012-02-24/syria-tunis-conference/53231034/1

[132] Tony Caron, նշվ. աշխ., էջ 1:

[133] Робинсон Дэн, Белый дом выступает за открытое обсуждение разногласий между Вашингтоном и Пекином, Новости «Голоса Америки», 15.03.2012. http://www.voanews.com/russian/news/Obama-China-Syria-Correction-2012-02-15-139342898.html

Սակայն սիրիական ճգնաժամի երկարաձգմանը զուգահեռ Պեկինում անհրաժեշտ համարեցին բանակցություններ վարել և կապեր հաստատել հակամարտող կողմերի հետ: Սիրիական ընդդիմության պատվիրակությունն այցելեց Չինաստան և փետրվարի 9-ին հանդիպում ունեցավ ՉԺՀ-ի փոխարտգործնախարար Չժայ Ցզյունի հետ: ՉԺՀ-ի ԱԳՆ-ը հայտարարեց, որ «կապեր ու շփումներ կպահպանի Սիրիայի համապատասխան ընդդիմադիր խմբավորումների հետ»[134]:

Փետրվարի 17-18-ը Չինաստանի կառավարության հատուկ պատվիրակ, փոխարտգործնախարար Չժայ Ցզյունը Սիրիա կատարած այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ նախագահ Բաշար ալ-Ասադի, արտգործնախարար Վալիդ ալ-Մուալլիմի, վերջինիս տեղակալի, ինչպես նաև սիրիական ընդդիմության պատասխանատու պաշտոնյաների հետ: Հանդիպումների ավարտին տրված մամլո ասուլիսին չին դիվանագետը նշեց, որ չինական կողմը սիրիական կառավարությանն ու երկրի տարբեր քաղաքական ուժերին կոչ է անում դադարեցնել քաղաքացիների դեմ իրականացվող բոլոր տեսակի բռնությունները, վերականգնել կայունությունն ու հասարակական բնականոն կարգերը[135]:

Միաժամանակ ԱՄՆ-ը Չինաստանին կոչ արեց փետրվարի 24-ին մասնակցել Թունիսում «Սիրիայի բարեկամների» համաժողովին, որին հրավիրված էին ավելի քան 70 երկիր[136]: «Սիրիայի բարեկամների» համաժողովի (որն առաջին անգամ հավաքվել էր իբրև միավորող դաշինք) մասնակիցներն Ասադին կոչ արեցին անհապաղ վերջ դնել արյունահեղությանն ու թույլատրել մարդասիրական օգնություն տրամադրել ապստամբների դեմ հաշվեհարդարներից տուժած շրջաններին[137]: Սակայն փետրվարի 23-ին ՉԺՀ-ի ԱԳՆ-ն հայտարարեց, որ Չինաստանը չի մասնակցի «Սիրիայի բարեկամ երկրների» հետ փետրվարի 24-ին

---

[134] Catherine Belton, Joshua Chaffin, Abigail Fielding-Smith, China Reveals Syria Opposition Visit, The Financial Times, Great Britain, 09.02.2012. http://www.ft.com/cms/s/8e905e1a-524c-11e1-a155-00144feabdc0Authorised=false.html?ilocation=http%3A%2F%2Fwww.ft.com%2Fcms%2Fs%2F0%2F8e905e1a-524c-11e1-a1 55-00144feabdc0.html&ireferer=#axzz1IltG eqmU

[135] Специальный посланник правительства Китая Чжай Цзюнь нанес визит в Сирию, Жэньминь Жибао, 19.02.2012. http://russian.people.com.cn/31520/7733054.html

[136] США призвали Китай принять участие во встрече «друзей Сирии», ВЗГЛЯД.РУ, 21.02.2012. http://vz.ru/news/2012/2/21/563127.html

[137] Clinton Blasts Russia, նշվ. աշխ., էջ 1:

նախատեսված հանդիպմանը[138]: Ի պատասխան՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության պաշտոնական ներկայացուցիչ Մարկ Տոները վստահեցրեց, որ «միջազգային հանրությունն իր դիրքորոշումը կհասցնի Ասադին առանց Ռուսաստանի և Չինաստանի մասնակցության»[139]:

Փաստենք, որ այնուամենայնիվ, մարտի 6-ին ՉԺՀ-ի արտգործնախարար Յան Ցզեչին Ժողովրդական ներկայացուցիչների Համաչինական համաժողովի 11-րդ գումարման 5-րդ նստաշրջանի շրջանակներում հայտարարեց, որ Պեկինը սերտ կապեր է պահպանում ԱՄՆ-ի հետ՝ Սիրիայի և Իրանի խնդիրների շուրջ[140]:

Փետրվարի 28-ին Ժնևում մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի Խորհրդի 19-րդ նստաշրջանի շրջանակներում սիրիական հարցի արագացված լսումների ընթացքում չինական պատվիրակության ներկայացուցչի տեղակալ Ցի Սյաոսյան Սիրիայի կառավարությանն ու քաղաքական բոլոր խմբավորումներին կոչ արեց անհապաղ և համակողմանիորեն դադարեցնել բռնություններն ու հնարավորինս սեղմ ժամկետներում վերականգնել երկրի կայունությունն ու հասարակական բնականոն կարգերը: Ցի Սյաոսյանի համաձայն՝ միջազգային հանրությունը պարտավոր է հարգել Սիրիայի ինքնավարությունը, անկախությունը, միասնականությունն ու տարածքային ամբողջականությունը, սիրիական ժողովրդի ինքնուրույն ընտրությունը, ինչպես նաև տարբեր կողմերի միջև քաղաքական երկխոսության արդյունքները: Ուստի Չինաստանը հանդես է գալիս Սիրիայի դեմ ռազմական միջամտությանը կամ «վարչախմբի հարկադրական հեռացմանը»[141]:

Ինչ վերաբերում է Սիրիայի նոր սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվեի արդյունքներին և Սիրիայի նկատմամբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով Խորհրդի գործողություններին, ապա ըստ ՉԺՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Հուն Լեյի՝ փետրվարի 28-ի հայտարարության, Պեկինը հուսով էր, որ

[138] КНР не будет участвовать в тунисской встрече «Друзей Сирии», Телеграфистъ, 23.02.2012. http://telegrafist.org/2012/02/23/5070/

[139] США считают, что мир донесет до Асада свою позицию и без РФ и Китая, Телеграфистъ, 24.02.2012. http://telegrafist.org/2012/02/24/5073/

[140] Китай и США поддерживают тесные контакты по вопросам Сирии и Ирана – глава МИД КНР, Russian.News.Cn, 06.03.2012. http://russian.news.cn/dossiers/2012-03/06/c_131449381.htm

[141] Представитель Китая призвала правительство и различные политические группы Сирии прекратить насилие, Жэньминь Жибао, 29.02.2012. http://russian.people.com.cn/31520/7743560.html

բոլոր շահագրգիռ կողմերը ջանքեր կգործադրեն Սիրիայում լարվածության թուլացման ուղղությամբ, և նոր սահմանադրության ընդունումը կնպաստի բարեփոխումների գործընթացի առաջխաղացմանն ու Սիրիայում երկխոսության կայացմանը[142]:

Իր կողմից Չինաստանի ԱԳՆ-ն մարտի 4-ին Սիրիայի հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ սեփական վեց կետանոց առաջարկութամբ հանդես եկավ: Այն իր մեջ բռնությունններն անհապաղ դադարեցնելու, քաղաքական երկխոսություն սկսելու, մարդասիրական օգնության տրամադրումն ապահովելու կոչ էր պարունակում՝ ուղղված միաժամանակ սիրիական կառավարությանը և ընդդիմությանը: Նշվում էր նաև ճգնաժամի քաղաքական կարգավորման գործում արաբական երկրներին ու ԱՊԼ-ին աջակցելու Չինաստանի պատրաստակամության մասին[143]: Պեկինը նաև Միջազգային Կարմիր խաչի կոմիտեի միջոցով սիրիական ժողովրդին 2 մլն ԱՄՆ դոլարի արտակարգ մարդասիրական դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ որոշում էր ընդունել[144]: Ի դեպ՝ Չինաստանն առաջին երկրներից էր, որը մարդասիրական օգնություն (5 մլն ԱՄՆ դոլար և 30 մլն յուան) տրամադրեց ոչ միայն Եգիպտոսին, Թունիսին, այլև Սիրիային[145]:

Ուշագրավն այն է, որ արդեն իսկ մարտի 21-ին ՄԱԿ-ի ԱԽ-ը միաձայն ընդունեց Սիրիայում իրադրության կարգավորման նպատակով հատուկ պատվիրակ Քոֆի Անանի առաջ քաշած առաջարկների «լիակատար պաշտպանությունն» արտահայտող հայտարարությունը, այդ թվում՝ 6 կետը, որոնց մեծ մասը համընկնում էր չինական կողմի առաջարկների հետ[146]:

ՉԺՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Յան Ցզեչին և դեսպան Լի Խուասինը մարտի 6-7-ը այցելեցին Սիրիա, որտեղ հանդիպումներ ունեցան սիրիական արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Վալիդ ալ-Մուալլիմի, վերջինիս տեղակալ Աիմեդ Արնուսի և սիրիական ընդդիմադիր խմբավորումների պատաս-

[142] Представитель МИД КНР о результатах референдума по проекту новой конституции Сирии и акции СПЧ ООН в отношении Сирии, Жэньминь Жибао, 29.02.2012. http://russian.people.com.cn/31521/7743545.html

[143] Ruan Zongze, նշվ. աշխ., էջ 1:

[144] Правительство Китая предоставит экстренную гуманитарную помощь сирийскому народу, Жэньминь Жибао, 10.03.2012. http://russian.people.com.cn/31521/7754024.html

[145] Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, նշվ. աշխ., էջ 18:

[146] Ruan Zongze, նշվ. աշխ., էջ 1:

խանատու դեմքերի հետ: Կողմերը կարծիքներ փոխանակեցին Սիրիայի ընթացիկ իրադրության վերաբերյալ և քննարկեցին սիրիական խնդրի կարգավորման ուղիները[147]: Սիրիական նախարարն ընդգծեց, որ Դամասկոսը ողջունում է բռնության (անկախ, թե որ կողմից է այն բխում) դադարեցման, հումանիտար ոլորտում ՄԱԿ-ին ցուցաբերվող աջակցության, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պատվիրակի հետ համագործակցության, երկրում սկսված բարեփոխումների գործընթացի արագացման և երկխոսության հաստատման անհրաժեշտության կոչերի վրա հիմնված չինական նախաձեռնությունը[148]:

Հարկ է նշել, որ ՉԺՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Յան Ցզիչենի և դեսպան Լի Խուասինի՝ Սիրիա կատարած այցից հետո չինական արտաքին գերատեսչության ղեկավարի օգնական Չժան Մինն ուղևորվեց Սաուդյան Արաբիա, Եգիպտոս և Ֆրանսիա[149]: Իսկ ապրիլի 11-ին Պեկինում ՉԺՀ-ի նախագահ Հու Ձինթաոն հանդիպեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայեփ Էրդողանի հետ: Հանդիպումն անցավ լարված մթնոլորտում՝ կապված Սիրիայի նկատմամբ լրացուցիչ պատժամիջոցներ մտցնելու նպատակով Անկարայի առաջարկության հետ, որը խստորեն դատապարտվեց Պեկինի կողմից[150]:

Հունիսի 5-ին ՆԱՏՕ-ի ռազմածովային խմբավորումը զորավարժություններ սկսեց Սիրիայի սահմանամերձ Արևելյան Միջերկրածովյան շրջանում: Ըստ պաշտոնական լեգենդի՝ ուսումնավարժանքների ընթացքում նախատեսվում էր Թուրքիայից, Գերմանիայից և Ֆրանսիայից երեք արագընթաց հածանավի մասնակցությամբ «ահաբեկչության դեմ պայքարի հետ կապված հնարքներ» կիրառել[151]:

Կարճ ժամանակ անց միջազգային, մասնավորապես իրանական, իսրայելական, արաբական ԶԼՄ-ների՝ հունիսի 19-ի հաղորդագրությունների համաձայն՝ Սիրիայի տարածքում համատեղ

[147] Представитель главы МИД КНР посещает Сирию, Russian.News.Cn, 08.03.2012. http://russian.news.cn/world/2012-03/08/c_131453904.htm

[148] Глава МИД САР получил письменное послание своего китайского коллеги, САНА, Дамаск, 07.03.2012. http://www.sana.sy/rus/325/2012/03/07/404840.htm

[149] Разрешение сирийского кризиса: необходимо придерживаться стратегии «шаг вперед», Жэньминь Жибао, Китай, 12.03.2012. http://russian.people.com.cn/95181/7755167.html

[150] Peter Mattis, China Fêtes Turkish Leader as Beijing Recognizes Ankara's Growing Role, China Brief, The Jamestown Foundation, Vol. XII, Issue 8, 12.04.2012, p. 2.

[151] Россия направила четыре корабля к берегам Сирии, Известия, 10.07.2012. http://izvestia.ru/news/529951

մարտավարական զորավարժություններ էին նախապատրաստում անցկացնել Չինաստանը, Իրանը, Սիրիան, Ռուսաստանը՝ իրենց մասշտաբներով աննախադեպ ՄԱ-ի պատմության մեջ: Վճռականություն դրսևորելով Սիրիայում գործող վարչախմբի պաշտպանության հարցում՝ վերոնշյալ երկրներն այդպիսով կարող էին հանդես գալ սիրիական հակամարտության նկատմամբ միջազգային միջամտության դեմ: Ըստ լրատվամիջոցների՝ Չինաստանն անգամ դիմել էր եգիպտական իշխանություններին՝ հունիսի վերջին Սուեզի ջրանցքով 12 ռազմանավի նավարկումը թույլատրելու համար: Մանյովրերին պետք է մասնակցեին մոտ 90000 զինծառայող, 400 ինքնաթիռ, ինչպես նաև ռազմանավեր[152]: Սակայն օրեր անց Չինաստանի ԱԳՆ-ն հայտարարեց, որ այդ հաղորդագրությունն անհիմն է: Ավելի վաղ այդ տեղեկությունը հերքել էին Սիրիայի նախագահի քաղաքական և տեղեկատվական հարցերով օգնական Բուսեյնա Շաաբանը և Ռուսաստանի ՊՆ-ը[153]:

Հունիսի 30-ին՝ Ժնևում արտգործնախարարների հանդիպմանը, քննարկվեց ՄԱԿ-ի հատուկ պատվիրակ Քոֆի Անանի առաջարկը՝ Սիրիայում ազգային միասնության կառավարության ստեղծման մասին, որի մեջ առաջարկվում էր ընդգրկել ինչպես ընդդիմության, այնպես էլ Բաշար ալ-Ասադի վարչակարգի կողմնակիցներին: Նախատեսվում էր նոր կառույցից բացառել այն անձանց, «որոնց ներկայությունը կարող էր բարդացնել իշխանությունը հանձնելու, հաշտություն և կայունություն հաստատելու գործընթացը»: Դժվար չէր կռահել, որ խոսքը Ասադի մասին էր: Ժնևյան հանդիպմանը մասնակցելու էին ՄԱԿ-ի ԱԽ-ի անդամները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը և Ֆրանսիան, ինչպես նաև ԵՄ-ը, Թուրքիան, Իրաքը, Քուվեյթը և Քաթարը: Հանդիպմանը մասնակցելու հրավեր չէին ստացել ինչպես սիրիական ընդդիմության, այնպես էլ Սիրիայի նախագահի ներկայացուցիչները[154]:

Նշենք, որ Չինաստանը հրաժարվեց մասնակցելուց նաև հուլիսի 6-ին Փարիզում «Սիրիայի բարեկամների խմբի» հանդիպ-

[152] Иран, Сирия, Россия и Китай проведут крупнейшие учения в истории Ближнего Востока: Израиль сегодня, Regnum, 21.06.2012. http://pda.regnum.ru/news/sport/1544175.html

Ըստ տեղեկությունների՝ այդ նավերը պետք է ուղղվեին սիրիական Տարտուս նավահանգիստ:

[153] Չինաստանի ԱԳՆ-ն հերքել է Սիրիայում խոշոր զորավարժություններ անցկացնելու լուրերը, 1in.am, 20.06.2012.

[154] Кофи Аннан предложит создать в Сирии новую власть, Известия, 28.06.2012.

մանը՝ հայտարարելով, որ անհրաժեշտ է ջանքերը կենտրոնացնել ժնևյան հանդիպման արդյունքների* վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման ուղղությամբ: Հուլիսի 7-ին ՉԺՀ-ի ԱԳՆ-ի պաշտոնական ներկայացուցիչ Լյու Վեյմինը, մեկնաբանելով «Սիրիայի բարեկամների խմբի» հանդիպման վերաբերյալ ԱՄՆ-ի պետքարտուղար Հ. Քլինթոնի հայտարարությունը, որի համաձայն՝ Չինաստանն ու Ռուսաստանը «կանխում են ճգնաժամի կարգավորման գործընթացը», հայտարարեց, որ Սիրիայի նկատմամբ Չինաստանի դիրքորոշման քննադատությունն ԱՄՆ-ի կողմից անընդունելի է[155]: Ավելին՝ ՉԺՀ-ի ԱԳՆ-ի միջազգային պայմանագրերի և կազմակերպությունների բաժնի խորհրդական Լոն Ճոուն նշեց, որ Արևմուտքը, ձգտելով զսպել Սիրիայի վարչախմբին, ի չիք է դարձնում երկրում հակամարտության խաղաղ կարգավորման բոլոր փորձերը[156]:

Հոկտեմբերի 31-ին՝ Պեկինում այցելության մեջ գտնվող Սիրիայի գծով ՄԱԿ-ի ԱՊԼ-ի հատուկ ներկայացուցիչ Լախդար Բրահիմի հետ բանակցությունների ընթացքում, ՉԺՀ-ի արտգործնախարար Յան Ցզեչինը հայտարարեց, որ Չինաստանը հետևողական և կայուն դեր է խաղում սիրիական ճգնաժամի ուղղությամբ՝ հանդես գալով չորս կետերից բաղկացած առաջարկությամբ[157]: Վերջինիս համաձայն՝ նախատեսվում էր Սիրիայում կրակի և մարտական բոլոր գործողությունների փուլային դադարեցում՝ սկզբում շրջաններում, այնուհետև՝ երկրի ողջ տարածքում. Լ. Բրահիմի և միջազգային հանրության աջակցությամբ անցումային ղեկավար մարմնի հետ կապված «ճանապարհային քարտեզի» պատրաստման գործում շահագրգիռ

* Հունիսի 30-ի ժնևի համաժողովին մասնակցում էին ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական անդամ հինգ պետությունների՝ Թուրքիայի, Քուվեյթի, Քաթարի, Իրաքի նախարարները, ՄԱԿ-ի, ԱՊԼ-ի և ԵՄ-ի ներկայացուցիչներ: Արտգործնախարարները համաձայնության եկան Սիրիայում անցումային կառավարություն հաստատելու և Բաշար ալ-Ասադի հրաժարականը չպահանջելու հարցում: Չինաստանը չէր մասնակցել Թունիսում փետրվարին և Թուրքիայում՝ ապրիլին տեղի ունեցած համաժողովներին: Այս մասին տե՛ս China not to Attend Upcoming Syria Meeting, China.org.cn, 5.07.2012. http://www.china.org.cn/world/2012-07/05/content_25828411.htm

155 МИД Китая: Критика со стороны США в отношении позиции КНР по Сирии неприемлема, Голос России, 7.07.2012. http://rus.ruvr.ru/2012_07_07/80614877/

156 Китай: Разрешению сирийского кризиса препятствует Запад, ВЗГЛЯД.РУ, 04.08.2012. http://vz.ru/news/2012/8/4/591876.html

157 Китай готов совместно с заинтересованными сторонами прилагать общие усилия для содействия скорейшему решению сирийского вопроса–МИД КНР, russian.china.org.cn, 07.11.2012. http://russian.china.org.cn/china/txt/2012-11/07/content_27037487.htm

բոլոր կողմերի ներկայացուցիչների մասնակցություն, Ժնևյան «գործողությունների խմբի» վերաբերյալ հուշագրի իրականացման գործում միջազգային հանրության աջակցություն, սիրիական ժողովրդին մարդասիրական օգնության ցուցաբերման ակտիվացում: Թվարկված միջոցառումների իրագործումը պետք է ապահովեին ինչպես երկրի իշխանությունները, այնպես էլ ընդդիմադիր խմբավորումները[158]:

2013 թ. հունվարի 6-ին ՉԺՀ-ի խոսնակը հայտնեց, որ Չինաստանը կողջունի բռնությունների դադարեցման նպատակով Սիրիայի հակամարտող կողմերի ընդունած ցանկացած որոշում[159]: Հունվարի 8-ին ՉԺՀ-ի արտգործնախարարը սիրիական խնդրի շուրջ հեռախոսային զրույց ունեցավ ՄԱԿ-ԱՊԼ միասնական հատուկ ներկայացուցիչ Լախդար Բրահիմի հետ՝ Պեկինի ամուր աջակցությունը հայտնելով նրա միջնորդական ջանքերին[160]: ՉԺՀ-ի արտգործնախարար Յան Ցզիեչին 2013 թ. փետրվարի 6-ին Սիրիայի փոխարտգործնախարար Ֆեյսալ ալ-Մաքդադի հետ Պեկինում ունեցած հանդիպման ընթացքում՝ կոչ արեց սիրիական հակամարտության բոլոր կողմերին հնարավորինս սեղմ ժամկետներում սկսել քաղաքական երկխոսությունը՝ գտնելով, որ իրադրությունը «կրիտիկական փուլի» է հասել: Նախորդ օրը Եգիպտոսում ՉԺՀ-ի դեսպանը (Song Aiguo) Կահիրեում հանդիպել էր «Սիրիայի Ընդդիմադիր Ազգային կոալիցիայի» և «Հեղափոխական Ուժերի» նախագահ Ահմեդ Մուազ ալ-Խաթիբին՝ նշելով, որ Չինաստանը հետևում է Ալ-Խաթիբի վերջին շրջանի դիվանագիտական գործունեությանը սիրիական խնդրի կարգավորման ուղղությամբ և հույս ունի, որ սիրիական հակամարտության բոլոր կողմերը հետևողական և հավասար հիմունքներով բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով քաղաքական համակողմանի երկխոսության և կարգավորման կհասնեն[161]: Չին դիվանագետը հորդորեց սիրիական հակամարտող կողմերին քաղաքական անցումային գործընթացը վարել Սիրի-

---

[158] Очередная пресс-конференция 1 ноября 2012г. у официального представителя МИД КНР Хун Лэя, Генеральное Консульство Китайской Народной Республики в г. Хабаровске, 01.11.2012. http://www.chinaconsulate.khb.ru/rus/fyrth/t985099.htm

[159] China Welcomes Generally Accepted Solution for Syria, China Daily, 07.01.2013. http://www.chinadaily.com.cn/china/2013-01/07/content_16092875.htm

[160] Chinese FM Talks with UN-AL Envoy on Syria in Phone, China Daily, 08.01.2013. http://www.chinadaily.com.cn/china/2013-01/08/content_16096603.htm

[161] Beijing Calls for Syria Political Transition, China Daily, 07.02.2013. http://www.chinadaily.com.cn/china/2013-02/07/content_16209754.htm

այի վերաբերյալ Գործողությունների խմբի ընդունած ժնևյան հուշագրի ոգուն համապատասխան[162]:

Այսպիսով՝ Չինաստանն իրեն դրսևորեց իբրև միջազգային հարաբերությունների հիմնարար նորմերի պաշտպանությամբ հանդես եկող և գլոբալ կառավարման գործերին մասնակցող ու պատասխանատվություն ստանձնող մեծ տերություն: ՉԺՀ–ն, սիրիական ճգնաժամի ողջ ընթացքում ամուր կանգնելով Սիրիայի ազգային ինքնիշխանության պաշտպանության դիրքերում, ամբողջովին բացառեց որևէ հիմքով, այդ թվում՝ մարդու իրավունքների ոտնահարման պատճառաբանությամբ երկրի ներքին գործերին միջամտության հնարավորությունը: Պեկինում գտնում են, որ Սիրիայի ապագան պետք է որոշի սեփական ժողովուրդը, Սիրիան անձամբ պետք է լուծի իր ներքին տարաձայնությունները և քաղաքական երկխոսության միջոցով ազգային կայունություն հաստատի երկրում[163]: Ըստ Պեկինի՝ Աֆղանստանի ու Իրաքի դեպքերը ցույց տվեցին, որ դրսից պարտադրված վարչախմբի փոփոխությունը չի հանգեցնում ցանկալի արդյունքի: Այդ պատճառով Չինաստանը չի ցանկանում հրաժարվել բանակցությունների միջնորդի դերից, որին վստահում է Ասադը[164]:

Պեկինում կարծում են, որ սիրիական վարչախմբի անկումը կարող է առավել ծանր հետևանքների հանգեցնել, քան ներկայիս քաղաքական ճգնաժամը: Տասնյակ հազարավոր քաղաքացիների մահվան փաստը մեծ ողբերգություն գնահատելով հանդերձ՝ Պեկինում ենթադրում են, որ արևմտյան երկրները թերագնահատում են իսլամական արմատականների իշխանության գալու կամ երկրում իշխանության հնարավոր վակուումի առաջացման հետևանքները[165]: Ուշագրավն այն է, որ ըստ «Global Times» օրաթերթի՝ «Արևելյան Թուրքեստանի Ազատագրական շարժման» (ETIM) մարտիկները Սիրիայում պայքարում են ընդդիմության կողմից: Վերջիններս 2012 թ. մայիս ամսից Սիրիա են տեղափոխվել Ասադի վարչախմբի դեմ պայքարում Ալ–Ղաիդային և ծայրահեղական այլ կազմակերպություններին միանալու նպատակով[166]:

162 China Urges Widely Accepted Syrian Solution, China Daily, 06.02.013. http://www.chinadaily.com.cn/china/2013–02/06/content_16209461.htm

163 China Opposes Foreign Intervention in Syria: FM, Xinhua, Beijing, 24.05.2011. http://www.chinadaily.com.cn/world/2011–05/24/content_12572110.htm

164 Франк Зирен, Изменить правила игры, Handelsblatt, Германия, 11.02.2012. http://www.inosmi.ru/asia/20120211/185634731.html

165 Тавитов В., նշվ. աշխ., էջ 1:

166 Uyghurs Fighting in Syria, Al–Manar, 29.10.2012. http://www.almanar.com.lb/english/adetails.php?eid=72711&frid=31&seccatid=91&cid=31&fromval=1

Պեկինում համոզված են, որ Ասադի պաշտոնաթողությունը չի հանգեցնի երկրում իրականացվող բռնությունների դադարեցմանը: Սիրիական իրադարձություններում նրանք տեսնում են ոչ թե բռնակալի և ապստամբների, այլ զինված խմբավորումների միջև պայքար, որում չի կարելի որևէ կողմին նախապատվություն տալ[167]: Այդ պատճառով էլ սիրիական ճգնաժամում չինացիներն ընտրություն են անում առկա ստատուս քվոյի և ոչ թե անկանխատեսելի ապագայի պաշտպանության օգտին:

Հարկ է նկատել, որ Պեկինը հազվադեպ է դիմում ՄԱԿ-ի ԱԽ-ում վետոյի օգտագործմանը, որի հետ կապված շարժառիթները տատանվում են ներքին քաղաքական և տնտեսական նկատառումներից մինչև աշխարհառազմավարական հաշվարկները: Պեկինում ենթադրում են, որ Արևմուտքի միջամտության սահմանափակումը տարածաշրջանում կարող է ծառայել իրենց շահերին: «Չհամաձայնելով» Արևմուտքի հետ և օգտվելով վետոյի իրավունքից, դիմելով իր հասցեին լուրջ քննադատության հետ բախվելու ռիսկին՝ Պեկինն ըստ էության փորձում է կանխել ՄԱ-ում նոր իրավիճակի ձևավորման վրա Արևմուտքի ազդեցությունը[168]: Մանավանդ որ ՄԱ-ի երկրները ոչ միայն ձգտում են ստանալու ՉԺՀ-ի աջակցությունը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում, այլև աստիճանաբար Պեկինի հետ հարաբերությունները միջոց են դիտում Վաշինգտոնից իրենց անկախության ապահովման ճանապարհին[169]:

Մոսկվայում ու Պեկինում կարծիք կա, որ Արևմուտքն ամբողջությամբ, մասնավորապես ԱՄՆ-ն արաբական աշխարհում ընդդիմադիր շարժումները սնուցում են իրենց սեփական շահերն առաջ տանելու նպատակով: Այդ իսկ պատճառով էլ Սիրիայում բռնի փոփոխություններից խուսափելու նպատակով Մոսկվան և Պեկինը գնալով ավելի են մերձենում Արևմուտքին բարեկամաբար տրամադրված վարչախմբերի իշխանության գալու կանխարգելման փորձերում[170]: Չինացի փորձագետներն անգամ խոսեցին «Պեկին-Մոսկվա առանցքի» ստեղծման մասին, որի վրա

Նշենք, որ շարժումն ընդգրկված է ՄԱԿ-ի կողմից սահմանված ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում:

[167] СМИ: Россия, Китай и Иран готовятся к учениям у берегов Сирии, Военное Обозрение, 2.08.2012. http://topwar.ru/17199-kitay-reshil-napravit-k-beregam-sirii-svoi-voennye-korabli.html

[168] Tony Caron, նշվ. աշխ., էջ 1:

[169] James Chen, The Emergence of China in the Middle East, նշվ. աշխ., էջ 6:

[170] Neil MacFarquhar, նշվ. աշխ., էջ 1:

պետք է դրվեր ամերիկյան կայսերապետությանը դիմակայելու պատմական առաքելությունը, քանի որ երկու երկրների համագործակցությունը շատ ավելի օգտակար կարող է լինել, քան ԱՄՆ-ի գերիշխանության դեմ նրանց առանձին բողոքարկման քաղաքականությունը: Հավանաբար այդ պատճառով է Չինաստանը պատրաստ սատարելու Ռուսաստանին վերջինիս համար կարևոր Սիրիայի, իսկ Ռուսաստանն իր հերթին՝ Պեկինի համար կարևոր խնդիրներում[171]:

Կարելի է ենթադրել, որ Սիրիայի հետ կապված տարաձայնությունների պատճառով ՄԱԿ-ի ԱԽ-ի մշտական հնգյակի արևմտյան գործընկերների հետ Պեկինի և Մոսկվայի հարաբերությունների սրումը «ստվեր է նետում» Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ Օբամայի վարչակազմի կողմից Թեհրանին մեկուսացնելու և ճնշելու ուղղությամբ ջանքերի վրա[172]: Չին փորձագետների համաձայն՝ դիվանագիտական մեկուսացման, ռազմական զսպման և ցանցային տեղեկատվության տարածման միջոցով Վաշինգտոնը փորձում է խստացնել պատժամիջոցների կիրառումն իրանական նավթի արտահանման և ֆինանսական համակարգի նկատմամբ: Իրանասիրիական դաշինքը «սպառնալիք» է դիտվում ոչ միայն ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակից Իսրայելի համար, այլև մտահոգում է Սաուդյան Արաբիային ու Ծոցի երկրներին ու Թուրքիային: Ուստի Ասադին ճնշելու նպատակը շիական «աղեղը կոտրելը» և Իրանին մեկուսացնելն է[173]: Սիրիայի անկումը կարող է հանգեցնել իրանամետ ճակատի (Իրան, Սիրիա, «Հիզբալլահ» կազմակերպություն) թուլացմանը՝ միաժամանակ ուժեղացնելով արևմտամետ դաշինքը (Սաուդյան Արաբիա, ԱՄԷ, Քաթար և այլն), ինչպես նաև Թուրքիան՝ իբրև ՆԱՏՕ-ի անդամ[174]:

Մինչդեռ Սիրիան ու Իրանը կենտրոնական դեր են խաղում Չինաստանի աշխարհաքաղաքական ազդեցության ամրապնդման ռազմավարությունում, որին նա հետամուտ է ճիշտ այնպիսի վճռականությամբ, ինչպես ԱՄՆ-ը, սակայն չինացիները, ի տարբերություն ԱՄՆ-ի, խուսափում են ռազմական միջամտությունից[175]: Չինաստանն Իրանը խոշոր տարանցիկ երկիր է դիտում Ծոցի

---

171 Тавитов В., նշվ. աշխ., էջ 1:
172 Tony Caron, նշվ. աշխ., էջ 1:
173 Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, նշվ. աշխ., էջ 14:
174 Тавитов В., նշվ. աշխ., էջ 1:
175 Франк Зирен, նշվ. աշխ., էջ 1:

երկրների, միջինասիական և հարավկովկասյան հանրապետությունների հետ հարաբերությունների զարգացման ճանապարհին[176]: Սիրիան Պեկինի համար կարճագույն ցամաքային ելք է դեպի Միջերկրական ծով և, իբրև Միջերկրածովյան միության անդամ, հավելյալ մուտք դեպի ԵՄ վերջինիս կողմից Չինաստանի դեմ առևտրային արգելքների կիրառման դեպքում[177]:

Միանգամայն ակնհայտ է, որ ՄԱ-ում Արևմուտքի գլխավոր նպատակներից մեկը Չինաստանին էներգետիկ առումով թուլացնելն է: Ուստի սիրիական ճգնաժամն ու նրա հետևանքները չափազանց ծանր կանդրադառնան Արևմուտքից ունեցած Չինաստանի էներգետիկ կախվածության վրա[178]: Չինաստանն ամեն կերպ կփորձի դա թույլ չտալ, քանի որ արդեն իսկայական վնասներ է կրել հակաիրանական պատժամիջոցների կիրառումից, լիբիական, սուդանական, արևմտաաֆրիկյան խնդիրների հետ բախումից: Իսկ Իրանի՝ ՉԺՀ-ի նավթի և բնական գազի կարևորագույն մատակարարներից մեկի դեմ ռազմական գործողությունները Չինաստանին կարող են հասցնել էներգետիկ ճգնաժամի եզրին[179]:

Հետևաբար Սիրիայի պաշտպանությամբ Պեկինը ձգտում է առաջին հերթին թույլ չտալ տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը, և երկրորդ՝ թույլ չտալ, որպեսզի Իրանը դառնա Արևմուտքի հաջորդ թիրախը: Չինաստանը կշարունակի ճկուն քաղաքականություն վարել նաև հետագայում՝ ելնելով իր աշխարհաքաղաքական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Սրան նպաստում է նաև ԱՄՆ-ի կողմից Չինաստանին ռազմավարական հակառակորդ գնահատելու հանգամանքը, հատկապես ՉԺՀ-ի տնտեսական բուռն աճի և ՄԱ-ի տարածաշրջանում վերջինիս դիրքերի ամրապնդման, մասնավորապես նավթարդյունահանող երկրների հետ վերջինիս կապերի խորացման համատեքստում:

---

176 Mehmet Ögütçü, Building a Turkish–Chinese Strategic Partnership In the 21st Century: Why and How? Presented at China Academy of Social Sciences, Institute of West Asia and Africa Studies, September 2000, Beijing, p. 6. http://www.econturk.org/Turkisheconomy/ogutcu4.pdf

177 Франк Зирен, նշվ. աշխ., էջ 1: «Մետաքսի ճանապարհը» Չինաստանի համար ավարտվում է Սիրիայում:

178 Сирийский кризис угрожает энергетической безопасности Китая: эксперт, Информационное агентство REX, 12.07.2012. http://www.iarex.ru/news/27412.html

179 СМИ: Россия, Китай и Иран готовятся к учениям у берегов Сирии, նշվ. աշխ., էջ 1: